ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՓՈԽՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1918 Թ. ԱՄՌԱՆ ԱՌԱՋԻՆ ԿԷՍԻՆ

Աշոտ Հայրունի

Նորաստեղծ Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնն, այսպէս կոչուած, Բաթումի պայմանագրի[1] վերանայման եւ դրանով ամրագրուած սահմանների փոփոխման, ինչպէս եւ Երեւանում ու Կովկասում կուտակուած, օրհասական վիճակում գտնուող հարիւր-հազարաւոր հայ փախստականների դրութեան կարգաւորման համար փորձում էր ապաւինել կայսերական Գերմանիայի աջակցութեանը: Արդէն յունիսի 8-ին Հայաստանի կառավարութեան անունից, Հ. Օհանջանեանի եւ Զուրաբովի ստորագրութեամբ, գերմանական արտգործնախարարութեանը ներկայացուեց մի ընդարձակ յուշագիր, որտեղ ամփոփ կերպով շարադրւում էին ինչպէս Արեւմտեան Հայաստանի ամայացման, արեւմտահայութեան բնաջնջման իրողութիւններն,[2] այնպէս էլ Կովկասում կուտակուած հայ փախստականների եւ առհասարակ կովկասահայութեան ծանր ու ողբերգական դրութիւնը:

Յուշագրում թուարկւում էին նաեւ Բաթումում ձեռք բերուած համաձայնութեամբ Թուրքիային տրուած շրջանները եւ ներկայացւում համապատասխան վիճակագրական տուեալներ դրանցում առկայ բնակչութեան կազմի վերաբերեալ: Միանշանակօրէն ընդգծւում էր, որ 10.000 քառ. կմ եւ 350.000 բնակչութիւն ունեցող Հայաստանի հանրապետութիւնը ի վիճակի չէր ոչ միայն ապաստան տրամադրել Թուրքական բանակի առաջխաղացման եւ բազմաթիւ տարածքների զիջման հետեւանքով ի յայտ եկած՝ շուրջ 800.000-ի հասնող փախստականներին, այլեւ անգամ կերակրել իր բուն բնակչութեանը: Ուշագրաւ է, որ յուշագրի հեղինակները հայ ժողովրդի համար ստեղծուած այդ ծանր ու ողբերգական իրադրութեան շարունակման դէպքում բացառում էին Կովկասում տեւական խաղաղութեան հաստատման հնարաւորութիւնը՝ հանգամանք, որի նկատմամբ կովկասեան տարածաշրջանում իր տնտեսական շահերին եւ ազդեցութեան ոլորտների ձեւաւորմանը յետամուտ Գերմանիան չէր կարող անտարբեր գտնուել: «Իրենց բնօրրանից փախած հայերը ստիպուած կը լինեն իրենց համար բնակութեան նոր շրջաններ որոնել, նշւում էր յուշագրում, եւ քանի որ ոչ մի տեղ ազատ տարածք չկայ, նրանք զէնքի ուժով կը ներխուժեն հարեւան ժողովուրդների տարածքները. մի իրողութիւն, որը նրանց, ինչպէս եւ հարեւան ժողովուրդներին մեծագոյն վտանգների կ'ենթարկի եւ ... կը հասցնի անկանխատեսելի աղէտների: Ամբողջ Կովկասը կը ներքաշուի արիւնոտ բախումների մի վայրի քաոսի մէջ, որի հետեւանքներից այն տասնամեակներ շարունակ չի կարողանայ ձերբազատուել, իր տնտեսական եւ մշակութային կեանքը դարձեալ կանոնաւորելու համար»[3]:

Յուշագրի հեղինակներն այդ հեռանկարը անխուսափելի էին համարում, եթէ դէթ «վերջին ժամին» մի զօրեղ ուժ չմիջամտէր իրավիճակը կարգաւորելու համար: Այդ կարգաւորումը, ինչպէս նշում էին նրանք, կարող էր լինել Բրեստի պայմանագրով նախատեսուած Թուրք-հայկական սահմանի վաւերացումը, ինչը հայերին հնարաւորութիւն կը տար գոյատեւել մի տարածքի վրայ, որը հազարամեակներ ի վեր եղել էր նրա հայրենիքի մէկ հատուածը: Իսկ ինչ վերաբերում է վերոնշեալ զօրեղ ուժին, ապա դա, յուշագրի հեղինակների հաւաստմամբ, կարող էր սոսկ Գերմանիան լինել: «Միայն հզօր Գերմանիան է ի վիճակի կործանումից փրկել մի ժողովուրդ, որն Ասիայի դարպասների մօտ հարիւրամեակներ ի վեր ներկայացրել է քրիստոնէական կրօնն ու եւրոպական մշակոյթը»,- նշում էին նրանք:

Վերջում ընդգծւում էր նաեւ Կովկասի տնտեսական զարգացման հեռանկարայնութիւնը եւ բազում հնարաւորութիւնները, որոնք կարող էին ծառայեցուել Գերմանիայի տնտեսական ծրագրերի իրականացմանը: Եթէ, սակայն, Թուրքիային թոյլատրուէր նուաճել Կովկասը, ապա Կովկասի տնտեսական զարգացման հնարաւորութիւնները «սաղմի մէջ կը խեղդուէին»: «Թուրքական կառավարութիւնը,- ընդգծւում էր յուշագրում,- որն անը,- կարող է իր սեփական երկրում նպաստել տնտեսական զարգացմանը, առաւել անտնտեսապէս զարգացնելու համար, եւ Կովկասի տնտեսական կեանքը շատ շուտով կը կործանուի, ինչպէս դա արդէն տեղի է ունեցել Թուրքիայում»[4]:

Վերոնշեալ պարզաբանումներն, անկասկած, հիմնաւորապէս կշռադատուած էին, քանի որ եթէ Գերմանիայի կառավարութիւնը կարող էր այդուհետ եւս հայութիւնը կարող էր այդուհետ եւս հայութեան ճակատագրի նկատմամբ անտարբեր գտնուել, ապա տարածաշրջանում իր հեռանկարային տնտեսական շահերն անտեսել չէր կարող: Այլ խնդիր է, անշուշտ, թէ այդ շահերի վերաբերեալ հայկական եւ գերմանական կողմերի պատկերացումներն ինչ չափով էին միմեանց համապատասխանում:

Ինչեւէ, եթէ նկատի առնենք այն հանգամանքը, որ Թուրքական կառավարութիւնը մինչ այդ գրեթէ ամենեւին հոգ չէր տանում իր կովկասեան գործողու-

---

1 Բաթումում ձեռք բերուած պայմանաւորուածութիւններին ամբողջութեամբ ծանօթանալու համար տե՛ս *Հայաստանը միջազգային դիւանագիտութեան եւ սովետական արտաքին քաղաքականութեան փաստաթղթերում*՝ պրոֆ. **Ջոն Կիրակոսեանի** խմբագրութեամբ, Եր., 1972, էջ 531-537, էջ 771-ի ծանօթութիւնը: Տե՛ս նաեւ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, էջ 96-98:

2 Յուշագրում Արեւմտեան Հայաստանում տիրող ընդհանուր պատկերը ներկայացնելիս վկայակոչւում էր Պաուլ Վայթցի ճանապարհորդական տեղեկագիրը: 1918 թ. ապրիլին գերմանական կառավարութեան յանձնարարականով գրող Պ. Վայթցը մի շարք այլ անձանց հետ միասին ճանապարհուեց Արեւմտեան Հայաստան, իրազեկուելու համար այնտեղ տիրող ընդհանուր իրավիճակին: Ցուսալով նրա եւ իր ուղեկիցների միջոցով մեղմացնել հայ ժողովրդի հանդէպ իրագործուած ոճրագործութիւնների առնչութեամբ Թուրքիային ուղղուող մեղադրանքները՝ թուրքական կառավարութիւնը ոչ միայն պատրաստակամօրէն աջակցեց այդ ճանապարհորդութեան ձեռնարկմանը, այլեւ գործադրեց բոլոր միջոցները «հայերի իրագործած ոճրագործութիւնների» մասին նրանց ապատեղեկատուութիւն մատակարարելու եւ ապակողմնորոշելու համար: Պ. Վայթցը, սակայն, ճանապարհորդութեան ընթացքում Արեւմտահայաստանի զանազան շրջաններում ու քաղաքներում հնարաւորութիւն ունեցաւ շփման մէջ մտնել տեղի բնակիչների հետ, ըստ հնարաւորին յստակ պատկերացում կազմել կատարուածի մասին եւ վերադարձից յետոյ պատրաստեց մի ընդարձակ տեղեկագիր, որտեղ միանգամայն իրատեսօրէն էր ներկայացուում հայութեան բնաջնջումից յետոյ Արեւմտեան Հայաստանի ամայացած բնակավայրերում տիրող ընդհանուր պատկերը: Այդ տեղեկագիրը, որի արժանահաւատութիւնը բնականաբար պէտք է անառարկելի համարուէր, յունիսի 20-ին ուղարկուեց նաեւ Գերմանիայի կանցլեր իշխան ֆոն Հերտլինգին: Պ. Վայթցի տեղեկագրի ամբողջական տեքստին ծանօթանալու համար տե՛ս *Die Armenische Frage und der Genozid an den Armeniern.* Dokumente aus dem politischen Archiv des deutschen Auswärtigen Amts, zusammengestellt und eingeleitet von Prof. Dr. **Wardges Mikaeljan**, Jerewan 2004, էջ 531-544£

3 Անդ, էջ 519-520:

4 Անդ, էջ 520

© National Library of Armenia

թիւնները Գերմանիայի հետ համաձայնեցնելու մասին, եւ մինչեւ իսկ կովկասեան ժողովուրդների հետ հաշտութեան պայմանագրերը կնքուել էին առանց գերմանական կողմի նախնական գիտութեան ու մասնակցութեան, ապա ակներեւ կը դառնայ, որ Թուրքիան բացայայտօրէն կամենում էր տարածաշրջանում հանդէս գալ՝ իբրեւ միակ կամ առնուազն հիմնական գերակայ ուժն ու թելադրող կողմը, մինչդեռ Գերմանիան հակուած չէր դա հանդուրժելու: Դա էր թերեւս պատճառը, որ այդ նոյն օրերին պաշտօնական Գերմանիան իր թուրք դաշնակցի գործողութիւնների նկատմամբ որոշեց դրսեւորել համեմատաբար վճռական, կարելի է ասել, անանախադէպ կոշտ դիրքորոշում:

Գեներալ Ֆոն Լոսովը երկաթուղու վերահսկողութեան համար արդէն յունիսի առաջին կէսին Փոթի-Թիֆլիս-Ալեքսանդրապոլ երկաթուղագծի երկայնքով տեղադրել էր գերմանական զօրախմբեր, ինչը Թուրքական երրորդ բանակի հրամանատարութեան կողմից մեծ դժգոհութեամբ ընդունուեց, եւ մինչեւ իսկ գերմանական բանակի գլխաւոր շտաբի պետ գեներալ Էրիխ Լուդենդորֆն իր՝ յունիսի 8-ին Էնվերին ուղարկած հեռագրում հարկ էր համարում ընդգծել, որ Թուրքական բանակի հրամանատարութիւնը գերմանական զօրամասերի նկատմամբ պատշաճ յարգանք եւ ուշադրութիւն չէր ցուցաբերում:

Ինչպէս տեղեկացուում էր Թիֆլիսի գերմանական հիւպատոսութեան յունիսի 19-ի տեղեկագրում, վերոնշեալ երկաթուղագծի աշխատանքը ամբողջութեամբ վերահսկւում էր գերմանացիների կողմից, եւ Թուրքերն իրենց փոխադրումները կարող էին միայն նրանց համաձայնութեան դէպքում իրագործել: Միաժամանակ նշւում էր, որ Կալագերան վայրից հիւսիս ընկած տարածքում Թուրքական զօրքերը մինչեւ իսկ կրակ են բացել գերմանական գնդերի վրայ, որոնք այն փոխադարձել են: Ուշագրաւ է նաեւ Էնվերի կողմից գեներալ Լուդենդորֆին ուղարկուած այն տեղեկութիւնը, որ Ղարաքիլիսայի մօտ տեղի ունեցած Ճակատամարտում գեներալ Ֆոն Լոսովի նախաձեռնութեամբ կռուող հայերին միացել են նաեւ կովկասեան տարածաշրջան ուղարկուած գերմանական ջոկատներ, որոնք ճակատամարտի աւարտից յետոյ Թուրքերի կողմից զինաթափ են արուել եւ ետ են ուղարկուել:[5] Այս ամէնը ցոյց է տալիս, թէ այդ օրերին Կովկասում որքան ընդգծուն են եղել գերմանա-թուրքական հակասութիւնները, որոնք, բնականաբար, իրենց դրսեւորումը պէտք է ստանային նաեւ երկու կողմերի պաշտօնական դիւանագիտական երկխօսութեան մէջ:

Յունիսի 8-ին գերմանական բանակի գլխաւոր շտաբի պետ գեներալ Էրիխ Լուդենդորֆը Էնվեր փաշային ուղարկեց մի հեռագիր՝ պահանջելով ճանաչել Բրեստի պայմանագրով հաստատուած սահմանները: «Թուրքիան, առանց հաշուի առնելու իր դաշնակիցներին, խախտել է Բրեստում կնքուած պայմանագրի՝ Անդրկովկասին վերաբերող կէտերը,- նշում էր նա հեռագրում:- Գերմանական կառավարութիւնը դրա դէմ արդէն բողոք է յայտնել եւ մատնանշել նման վարքագծի հետեւանքները: Ես աւելորդ չեմ համարում Ձերդ Գերազանցութեանը հաւաստիացնել, որ լիովին համամիտ եմ գերմանական կառավարութեան քայլերի հետ: ... Ձերդ Գերազանցութեանը ես կրկին խնդրում եմ յարգել Բրեստի պայմանագրով հաստատուած սահմանները, հակառակ դէպքում ես պէտք է ինձ այլ որոշումների ազատութիւն վերապահեմ:

Պայմանագրերը, որոնք Թուրքիայի եւ անդրկովկասեան պետութիւնների միջեւ կնքուել են՝ շրջանցելով Գերմանիային, Աւստրիային եւ Բուլղարիային, ես հէնց սկզբից եւեթ չեմ կարող ճանաչել: Ինչպէս Ձերդ Գերազանցութեանը յայտնի է, ես միշտ ջերմօրէն պաշտպանել եմ Ձեր շահերն ու ցանկութիւնները: Ես պէտք է Ձերդ Գերազանցութեանը պարզ կերպով յայտնեմ, որ այսուհետեւ ոչ միայն դա չեմ կարող անել, այլեւ որ Թուրքիայի՝ պայմանագրին հակասող գործելակերպը ինձ համար բացառում է Ձերդ Գերազանցութեան հետ ցանկացած համագործակցութիւն»[6]:

Յաջորդ օրը՝ յունիսի 9-ին, Էնվեր փաշային հեռագիր է ուղարկում նաեւ բանակի գլխաւոր հրամանատար Ֆելդմարշալ Հինդենբուրգը, որտեղ մասնաւորապէս նշւում էր. «Բանակի գլխաւոր հրամանատարութեան անունից ես Ձերդ Գերազանցութեանը խնդրում եմ հրամայել, որ բոլոր Թուրքական զօրքերը ետ քաշուեն կովկասեան տարածքից, բացառութեամբ Կարսի, Արդահանի եւ Բաթումի շրջանների»[7]:

Այն, որ Թուրքիան մտադիր չէր հեշտութեամբ տեղի տալ գերմանական պահանջներին եւ, սակայն, չէր կամենում նաեւ բարդացնել իր յարաբերութիւնները դաշնակցի հետ, կարող է վկայել, օրինակ, Էնվերի կողմից յունիսի 10-ին գեներալ Լուդենդորֆին ուղարկուած հեռագիրը, որը, ի դէպ, նաեւ Թուրքիայի պանթուրքական նպատակների նորովի բացայայտման

ուշագրաւ վկայական է: «Ղրիմի օպերացիայի ժամանակ գերմանական գլխաւոր շտաբը մեր զօրքերի մասնակցութիւնը ցանկալի չհամարեց, եւ չնայած մենք նոյնպէս այդ հարցում շահագրգռուած էինք, մեր մասնակցութեան համար չպնդեցինք եւ ընդունեցինք գերմանական գլխաւոր շտաբի տեսակէտը: Պարզ եւ յստակ է, սակայն, որ մենք առաջին հերթին կովկասեան հարցում համաշահագրգռութիւններ ունենք: Չնայած այդ իրողութեանը, գերմանացիները պատրաստւում են, առանց մեզ նախապէս տեղեկացնելու, Թիֆլիս-Փոթի երկաթուղագծի համատեղ օգտագործման համար երկու գերմանական գումարտակ ուղարկել Վրաստան եւ այդ գծի վրայ գերմանական գերիներից կազմուած զօրամասեր տեղադրել: Այլապէս եւս մեր դաշնակցի կողմից բոլոր որոշումները կայացուում են միայն այստեղի դեսպանի հետ միասին: Մեզ, ըստ այդմ, ապպանի հետ մշտապէս հաշուի է առնում, որ մեզ ուժգին կերպով հեշեցնում է, որ մեզ ուժգին կերպով հետաքրքրող մի երկրամասում մի նման կարեւոր հարցի վերաբերեալ մեր տեսակէտները կայացուում են միայն այստեղի դեսպանի հետ միասին: Մեզ, ըստ այդմ, ապպանի հետ միասին: Մեզ ասել էին, որ Ղարաքիլիսայի մօտ հայերի հետ տեղի ունեցած մի մարտում նրանց հետ մեր դէմ հանդէս են եկել նաեւ գերմանական յատուկ նշանակութեան ջոկատները: Ես դա սկզբում հնարաւոր չհամարեցի, այլ ընդունեցի որպէս հայերի բամբասանք: Փաստը, այնեցրած խորամանկութիւն: Դրանից յետոյ ես այդ ջոկատները զինաթափել եւ ետ եմ ուղարկել: Ինչպէս մեզ թւում է, այդ իրադարձութիւնները ինքնուրոյն կերպով նախաձեռնել է գեներալ Լոսովը: Այդօրինակ գործելակերպը վրացիներին եւ հայերին հաւատ կը ներշնչի, որ իբրեւ թէ թուրքական եւ գերմանական կառավարութիւնները կովկասեան հարցում միասնաբար չեն: Այդ պատճառով խիստ անհրաժեշտ է կովկասեան հարցի վերաբերեալ

---

5 Անդ, էջ 527-528

6 *Revidierte Ausgabe der von Johannes Lepsius 1919 unter dem Titel "Deutschland und Armenien" herausgegebenen Sammlung diplomatischer Aktenstücke,* zusammengestellt und eingeleitet von **Wolfgang Gust**. Տե՛ս ինտերնետային ցանցում. http:/home.t- online.de/home/wolfgang.gust/dvita.htm., թիւ 399. փաստաթուղթը:

7 *Deutschland und Armenien 1914-1918,* Sammlung diplomatischer Aktenstücke, Herausgegeben und eingeleitet von Dr. **Johannes Lepsius**, Potsdam, 1919, էջ 394:

© National Library of Armenia

մտքերը մեզ ժամանակին տեղեկացնել, դաշնակիցների միջեւ երկպառակութիւնից խուսափելու համար:

Մենք Գուրիստանում մեծ հետաքրքրութիւններ չունենք, սակայն հայերը գտնուում են մեր եւ Արեւելքում գտնուող մուսուլմանական զանգուածների միջեւ: Այդ վիճակը մեզ հարկադրում է սոսկ դիտորդներ չմնալ: Այդ պատճառով ես Նորին Գերազանցութիւն գեներալ Լուդենդորֆին թախանձագին խնդրում եմ այդ հարցերի վերաբերեալ իր տեսակէտը ժամանակին եւ ճշգրիտ կերպով տեղեկացնել ինձ»[8]:

Ինչեւէ, այս եւ միւս սկզբնաղբիւրները որոշակիօրէն փաստում են, որ մայիս-յունիս ամիսներին գերմանա-թուրքական փոխյարաբերութիւններում ի յայտ էին եկել զգալի լարուածութիւն եւ հակասութիւններ, որոնց շարժառիթը Կովկասում թուրքական կողմի վարած ինքնիշխան քաղաքականութիւնն էր, իսկ առաւել ցայտուն դրսեւորումներից մէկը՝ գերմանական ջոկատների զինաթափումն ու վտարումը, որը տեղի էր ունեցել իբրեւ թէ Ղարաքիլիսայի մարտերում հայերին օգնութիւն ցուցաբերելու պատճառով:[9]

Գերմանական կողմի վերոնշեալ պահանջները չիրականացան, ըստ որում, ոչ միայն այն պատճառով, որ Թուրքիան մտադիր չէր դրանց հեշտութեամբ տեղի տալ, այլեւ, որ Գերմանիան եւս դրանց իրագործմանը հետեւողականօրէն հետամուտ լինելու մտադրութիւն չունէր:

Դրանք վերջինիս անհրաժեշտ էին, առաջին հերթին, թուրքական կառավարութեանը սաստելու, նրա գործողութիւնները վերահսկելի, ուղղորդելի դարձնելու եւ միաժամանակ նաեւ իր դիրքերը Կովկասում ամրապնդելու համար: Քանի որ գերմանական կողմը մտադիր չէր ընդունել Կովկասում Թուրքիայի ինքնիշխանութեան յաւակնութիւնները, երկու կողմերն ի վերջոյ ձեռք են բերում պայմանաւորուածութիւն, որ Քառեակ միութեան բոլոր պետութիւնների ներկայացուցիչների մասնակցութեամբ Կոստանդնուպոլսում հրաւիրուի մի համաժողով, Կովկասին վերաբերող սահմանային եւ միւս բոլոր խնդիրները համատեղ կերպով վճռելու համար:

Գերմանական արտգործնախարարութիւնը դեռ յունիսի 5-ին Հայաստանի Հանրապետութեան պատուիրակութեանը տեղեկացրել էր Կովկասում թուրքերի առաջխաղացումը կասեցնելու եւ նաեւ թուրքերի կողմից գրաւած շրջաններում հայ բնակչութեանը հետապնդումներից ապահովելու նպատակով գերմանական կառավարութեան ձեռնարկած «ազդեցիկ» միջոցառումների[10], ինչպէս նաեւ վերոնշեալ համաժողովի հրաւիրման պայմանաւորուածութեան մասին, որին, ինչպէս արտգործնախարարութիւնն էր յայտնել, նախատեսուած էր նաեւ վրացական ներկայացուցչութեան մասնակցութիւնը, իսկ հայերի մասնակցութեան հնարաւորութիւնը դեռ անորոշ էր մնում, քանի որ Կովկասեան Հայաստանում տիրող իրադրութիւնն իբրեւ թէ դեռեւս բաւականաչափ պարզ չէր:

Յունիսի 10-ին պատուիրակութիւնն արտգործնախարարութեանը մի նոր ընդարձակ ուղերձ ներկայացրեց, որտեղ իր երախտագիտութիւնը յայտնելով վերոնշեալ նպատակներով միջոցառումների

8 *Die Armenische Frage und der Genozid an den Armeniern...*, էջ 527-528:

9 Թուրքական ուժերի կողմից Ղարաքիլիսայում եւ Ղազրգանում գտնուող գերմանական պահակային ջոկատների զինաթափման մասին փոքրինչ միջնորդաւորուած կերպով հաղորդում է նաեւ գեներալ ֆոն Կրեսի՝ յունիսի 11-ին արտգործնախարարութեանը ուղարկուած հեռագրում: Նաեւ տեղեկացուում է, որ զինաթափուած ջոկատներին ուղարկել են Կարս: Անդ, էջ 529:

10 Նման միջոցառումների իրագործման ակնառու փաստեր, ըստ էութեան, չկան:

ձեռնարկման, ինչպէս նաեւ Բրեստի պայմանագրի պահանջների գործադրման՝ գերմանական կողմի մտադրութեան համար՝ նա միաժամանակ մանրազնին պարզաբանումներ էր կատարում Հայաստանի Հանրապետութիւնում առկայ իրադրութեան մասին՝ ընդգծելով նաեւ նախատեսուած համաժողովին Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչների մասնակցութեան անհրաժեշտութիւնը: Դա հիմնաւորելու համար պատուիրակութիւնը ուղերձում նշում էր, որ Վրաստանի եւ Հայաստանի կառավարութիւնների ձեւաւորումը տեղի է ունեցել նոյն ճանապարհով, եւ որ երկու երկրներում կառավարման գործառոյթն իրականացնող հայկական ու վրացական Ազգային խորհուրդների միջեւ որեւէ էական տարբերութիւն չկար: Ինչպէս վրացական Ազգային խորհուրդն էր ընտրուել Ռուսաստանի բոլոր վրացիների կողմից, այնպէս էլ Հայոց ազգային խորհուրդը՝ Ռուսաստանի բոլոր հայերի կողմից, որոնց 95 տոկոսը բնակւում էր Կովկասում: Պատուիրակութիւնը հարկ էր համարում ընդգծել, որ թուրքահայերը, նոյնիսկ նրանք, ովքեր Կովկասում էին գտնուում, ընտրութիւններին չէին մասնակցել եւ իրենց համար առանձին Ազգային խորհուրդ էին ստեղծել: Ըստ այդմ՝ Հայոց ազգային խորհուրդը ներկայացնում էր ոչ թէ ողջ հայ ազգը, այլ բացառապէս կովկասեան Հայաստանի հայերին, այսինքն՝ այն տարածքի, որը գտնուում էր իր ենթակայութեան ներքոյ: Հայոց ազգային խորհուրդը, որպէս կառավարման մարմին, ոչնչով չէր զանազանուում վրացականից: Առկայ միակ զանազանութիւնը ունէր ոչ թէ որակական, այլ թուային նշանակութիւն, եթէ նկատի առնուէր, որ Վրաստանի սահմաններից դուրս գտնուող՝ Ռուսաստանի վրացիների թուաքանակը անհամեմատ աւելի քիչ էր, քան Հայաստանի Հանրապետութեան սահմաններից դուրս գտնուող հայերինը: «Այն հանգամանքը,- նշւում էր ուղերձում,- որ Հայոց ազգային-խորհուրդը ներկայումս փաստօրէն Կովկասեան Հայաստանում է կառավարման գործառոյթ իրականացնում եւ իր խնդիրը չի համարում (աւելի, քանի միայն բարոյական տեսանկիւնից) ներկայացնել այդ տարածքից դուրս գտնուող հայերին, մեզ հիմք է ընձեռում խնդրելու, որ նրան նոյնպէս թոյլատրուի պաշտօնական ներկայացուցչութիւն ուղարկել համաժողովին մասնակցելու համար: Մենք դա համարում ենք անխուսափելիօրէն անհրաժեշտ, քանի որ համաժողովում պէտք է վճռուի Կովկասի ճակատագիրը, եւ որչափ անպատակայարմար, նոյնչափ եւ անարդարացի կը լինի հայերին, որոնք կազմում են Անդրկովկասի ամբողջ բնակչութեան ոչ պակաս քան մէկ երրորդ մասը, թոյլ չտալ մասնակցել մի համաժողովի, որը վերջնական որոշումներ պէտք է կայացնի Կովկասում առկայ խնդիրների լուծման համար»[11]:

Այնուհետեւ ներկայացուում էին մանրամասն թուական տուեալներ Կովկասի տարբեր շրջանների հայ բնակչութեան վերաբերեալ եւ մի քարտէզ, որի վրայ միասնական, ընդհանուր տարածքով սահմանակցում էին Երեւանի նահանգը (Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի, Էջմիածնի, Երեւանի, Սուրմալուի, Շարուր-Դարալագեազի եւ Նախիջեւանի շրջաններով), Թիֆլիսի նահանգից Ախալքալաքի շրջանը եւ Բորչալուի մի մասը, Ելիզաւետպոլի նահանգից Զանգեզուրի ամբողջ տարածքը եւ Ղազախի, Ելիզաւետպոլի, Ջեւանշիրի, Շուշիի եւ Կարեագինոյի (Ջեբրաիլի) շրջաններից առանձին հատուածներ: Պատուիրակութիւնը միաժամանակ տեղեկացուում էր, որ Ռուսաստանի տիրապետութեան ժամանակ եւ նաեւ դրանից յետոյ այդ տարածքը համարուել է Կովկասում հայկական շահագրգռութիւնների տա-

11 Անդ, էջ 522

© National Library of Armenia

րածք, եւ ներկայումս էլ դրա բնակչութեան աւելի քան երկու երրորդը հայեր էին: Նշւում էր, որ այդ տարածքը, որտեղ բնակւում էին 1,3 միլիոն հայեր եւ միայն 400.000 մահմեդականներ, ապագայ կովկասեան Հայաստանին յատկացուելու դէպքում կը միաւորէր կովկասաբնակ հայութեան մեծագոյն մասին, որից դուրս թաթարական բնակատարածքներում միայն 300-400.000, իսկ վրացականում միայն 300.000 հայեր կը մնային, եւ հիմք կը հանդիսանար կենսունակ հայկական պետութիւն ստեղծելու համար:

Այնուհետեւ ուղերձում տեղեկացւում էր, որ թաթարները, թուրքական զօրքերի առաջխաղացումից քաջալերուած, իրենց պահանջները մեծացրեցին եւ թուրքական կողմի վերջնագրից երկու օր առաջ սահմանների վերանայման պահանջ առաջադրեցին, որի արդիւնքում Հայոց ազգային խորհուրդը հարկադրուած եղաւ վերոնշեալ տարածքից նրանց զիջել Ջեւանշիրի, Կարեագինոյի, Շուշիի, Ելիզաւետպոլի, Դարալագեազի, Զանգեզուրի, Նախիջեւանի, Սուրմալուի շրջանները եւ Երեւանի շրջանի մի մասը: Այդ կապակցութեամբ համաձայնագրի կնքումից յետոյ հայկական կողմի տրամադրութեան տակ մնում էր միայն 25.000 քառ. կմ տարածութիւն՝ մօտ 800.000 հայ եւ 100-150.000 մահմեդական բնակչութեամբ:

Հայկական կողմին, սակայն, վիճակուած չէր տնօրինել նոյնիսկ այդ զգալիօրէն փոքրացուած տարածքը: Թուրքական կողմի վերջնագրի ներկայացումից յետոյ այն վերստին անդամահատուեց, որից յետոյ, ինչպէս յայտնի է, հայկական կողմի տրամադրութեան տակ մնաց միայն 10.000 քառ. կմ տարածութիւն, որը մեծ մասամբ պատուած էր ջրով ու անանցանելի լեռներով: Նշելով, որ տարածքների նման «անհամամասն» բաժանման դէպքում Կովկասում բացառւում էր տեւական կայուն իրաւիճակի ստեղծումը, եւ որ հայկական կողմին յատկացուած վերոնշեալ փոքրիկ հողակտորի վրայ անհնար էր կենսունակ պետութիւն ստեղծել՝ պատուիրակութիւնը պնդում էր, որ Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը ծայրայեղ դէպքում կարող էր ընդունելի համարել վերոնշեալ 25.000 քառ. կմ մակերես ունեցող տարածքը, որը չնայած նոյնպէս խիստ աննպաստ տարբերակ էր, սակայն ամէն դէպքում ընդունելի:

Վերջում, տեղեկացնելով, որ թուրքերը Բաթումի բանակցութիւնների ժամանակ «ստրատեգիական առումով» մեծ կարեւորութիւն էին տալիս այդ տարածքի՝ արդէն իսկ անդամահատուած շրջանների սեփականացմանը, պատուիրակութիւնը նշում էր, որ Բրեստի պայմանագրով հաստատուած սահմանները կարող էին ըստ այդմ փոփոխուել: Մասնաւորապէս ընդգծւում էր, որ այդ շրջանների փոխարէն կարող էր հայկական կողմին Արփաչայի աջ ափին յատկացուել 20 կմ լայնութիւն եւ 50-60 կմ երկարութիւն ունեցող մի հողակտոր, որը ներկայումս էլ բնակեցուած էր փախստական հայերով, եւ որի վրայ գտնւում էին Անիի ու այլ պատմական քաղաքների աւերակները: Հարկ էր համարւում նաեւ ընդգծել, որ այդ աւերակները պատմական մեծ նշանակութիւն ունէին, եւ դրանց պահպանումը բխում էր համաշխարհային հնագիտութեան շահերից:[12]

Պատուիրակութիւնը յունիսի 15-ին եւ յուլիսի 2-ին գերմանական արտգործնախարարութեանը յանձնեց երկու նոր յուշագրեր եւս, որոնցում հիմնականում ներկայացւում էր Կովկասում կուտակուած փախստականների ծանր ու ողբերգական դրութիւնը:

12 Անդ, էջ 526

Յուլիսի 2-ի յուշագրում տեղեկացւում էր, որ թուրքերի կողմից գրաւուած բնակավայրերից զանգուածային փախուստի դիմած հայերի թիւն արդէն հասնում էր 600.000-ի, ընդ որում, այդ թուաքանակը թուրքահայ փախստականներին չէր վերաբերում: Գրեթէ բացառապէս բաց երկնքի տակ գտնուող այդ փախստականների ծանր վիճակի ներկայացման հետ մէկտեղ նշւում էր, որ մօտեցող ձմռան, սովահարութեան եւ արդէն իսկ սկսուած համաճարակների պայմաններում նրանք դատապարտուած էին ոչնչացման: Այդ փախստական զանգուածին սպառնացող վտանգները կարող էին կանխուել միայն նրանց իրենց հայրենի բնակավայրերը վերադարձնելու դէպքում, սակայն նաեւ ընդգծւում էր, որ դա անհնար էր լինելու այնքան ժամանակ, քանի դեռ թուրքերը դրանք շարունակում էին գրաւուած պահել: «Նրանք վախենում են, որ թուրքերի կողմից կը կալանաւորուեն եւ կ'առեւանգուեն, ինչպէս դա տեղի է ունեցել իրենց ետ մնացած ազգակիցների հետ, երբ 16 տարեկանից մեծ տղամարդիկ զօրակոչուեցին ու անհետացան,- նշւում էր յուշագրում:- Փախստականները միայն այն ժամանակ կը վերադառնան, երբ թուրքերը տուեալ տարածքն ազատած կը լինեն: Մենք հնարաւորութիւն ունեցանք տեղեկանալու, որ գերմանական կառավարութիւնը վճռականօրէն է տրամադրուած եւ քայլեր է ձեռնարկել թուրքական զօրքերին դրդելու, որ նրանք ազատեն մինչեւ Բրեստի պայմանագրով նախատեսուած սահմաններն ընկած հայկական տարածքը: Կովկասում մեր ազգային գոյատեւման այդ ազդու պաշտպանութիւնը մեզ համակում է խոր երախտագիտութեամբ եւ թոյլ է տալիս վստահաբար նայել ապագային: Մեզ մնում է խնդրել, որ տարածքի ազատումը, քանի որ այն արդէն վճռուած է, նկատի առնելով հայ փախստականների երերուն դրութիւնը եւ նրանց շուտափոյթ վերադարձի անհրաժեշտութիւնը՝ տեղի ունենայ առանց ուշացման, փախստական հայերին մեծագոյն վտանգներից եւ կորուստներից պահպանելու համար»[13]:

Կա՛մ, թերեւս, պատուիրակութիւնն էր անհիմն լաւատեսութիւն ցուցաբերում, կա՛մ գերմանական արտգործնախարարութիւնն էր շտապել պատուիրակութեան անդամներին ներշնչելու այդ լաւատեսութիւնը: Բրեստ Լիտովսկի սահմանների ճանաչման հարցը, ինչպէս արդէն նշուել է, գերմանա-թուրքական երկխօսութեան օրակարգում փոխարինուեց Կոստանդնուպոլսում դաշնակից պետութիւնների մասնակցութեամբ մի համաժողովի հրաւիրման ծրագրով, որն իբրեւ թէ պէտք է կարգաւորէր Կովկասում առկայ բոլոր սահմանային եւ միւս յարակից խնդիրները: Համաժողովը, սակայն, ինչպէս շուտով կը պարզաբանուի, հետագայ ամիսներին եւս շարունակելով մնալ օրակարգում, այդպէս էլ չիրագործուեց: Երկու դաշնակիցները մրցում էին Կովկասում գերիշխանութեան առաւելի լայն գօտիներ ձեռք բերելու համար, որոնց թւում կարեւոր տեղ էր զբաղեցնում նաեւ Բաքուն իր նաւթահանքերով:[14] Գերմանիան արդէն յունիսին շտապում էր Կովկասում ամրագրել իր ազդեցութեան եւ գերիշխանութեան ոլորտները, ինչը Թուրքիայի հետ որոշակի փոխըմբռնում ապահովելու համար, պէտք է իրականացուէր տնտեսապէս անհեռանկար եւ փոքցուէր տնտեսապէս անհեռանկար եւ փոք-

13 *Deutschland und Armenien 1914-1918...*, էջ 402

14 Դեռ յունիսի երկրորդ կէսին Թիֆլիսի գերմանական հիւպատոսութիւնը, Բեռլին ուղարկելով Թուրքիայի հետ հայերի եւ վրացիների, ինչպէս եւ հիւսիսկովկասեան լեռնականների կնքած պայմանագրերի պատճէնները, զուգահեռաբար իր կողմից տեղեկացնում էր, որ ներկայումս կարեւորագոյն խնդիրը պէտք է համարուէր Բաքուի գրաւումը, քանի որ ողջ Կովկասի տնտեսական կեանքը մազութային վառելիքի վրայ էր հիմնուած, իսկ դրա առկայ պաշարները կը բաւարարէին ոչ աւելի քան 10 օր:

© National Library of Armenia

ըիկ տարածքում կուտակուած հայ ժողովրդի հանդէպ որեւէ յանձնառութիւն չստանձնելու, այսինքն՝ նրան դարձեալ բախտի քմահաճոյքին թողնելու դնով:

Գերմանական կառավարութիւնը գեներալ Ֆոն Զեկտի միջոցով Թուրքիայից պահանջեց հրաժարուել Բաքուի վրայ յարձակուելու իր ծրագրից եւ դադարեցնել այդ նպատակով Ելիզաւետպոլում զօրքեր կենտրոնացնել: Միաժամանակ Գերմանիան յունիսին Վրաստանը պաշտօնապէս ճանաչեց որպէս իր պաշտպանութեան ներքոյ գտնուող երկիր՝ լիակատար վերահսկողութիւն իրականացնելու համար այնտեղ ուղարկելով գերմանական զօրամիաւորումներ, իսկ Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը, չնայած նմանապէս Գերմանիայի հովանաւորութիւնը ստանալու իր բազում խնդրանքներին, լաւագոյն դէպքում ցաւակցութիւն եւ յուսադրող խոստումներ էր ստանում: Հայ ժողովրդի ճակատագրի նկատմամբ Գերմանիայի ձեռնպահութիւնը, բնականաբար, շարունակում էր գործելու լայն ազատութիւն ընձեռել Թուրք ոճրագործներին: Ինչպէս, օրինակ, Վրաստանում գերմանական ջոկատների հրամանատարի ժամանակաւոր պաշտօնակատար կապիտան Ֆոն Եգան-Կրիգերն էր յունիսի 15-ին տեղեկացնում. Թուրքական զօրքերն ու սպաները առաջացող գերմանական զօրքերին ճանապարհ տալու եւ հարաւային Վրաստանի տարածքն ազատելու ժամանակ դաժան ոճրագործութիւններ էին կատարում հայ բնակչութեան հանդէպ՝ միաժամանակ նրանց դէմ գրգռելով նաեւ տեղացի թաթարներին[15]:

Ինչեւէ, չնայած Թուրքական կառավարութիւնը մեծ դժգոհութեամբ ընդունեց Վրաստանում գերմանական վերահսկողութեան հաստատման իրողութիւնը, սակայն նա այլընտրանք չունէր, քանի որ Գերմանիան այդ հարցում վճռականօրէն էր գործում: Ինչպէս տեղեկացնում էր Կոստանդնուպոլսի գերմանական դեսպան Բեռնշտորֆը ԱԳՆ-ին ուղարկուած իր՝ յունիսի 24-ի հեռագրում, Հալիլն իր գլխաւոր շտաբի պետի գերմանացի տեղակալին հաղորդել էր, որ 10-րդ գերմանական հետեւակային գունդը հասել էր Վրաստան: «Գերմանացի սպաները,- նշում էր Հալիլը,- յայտարարել են, որ կ'արգելեն Թուրքական զօրքերի կողմից Վրաստանի սահմանի խախտման իւրաքանչիւր փորձ: Ալեքսանդրապոլից հարաւ ընկած շրջանում գերմանացիները պէտք է Թուրքերին հարկադրած լինեն ազատել Թուրքական նոր սահմանի ներսում ընկած մի բնակավայր: Թուրքական հրամանատարն այնտեղ գերմանական հետագայ առաջխաղացմանը կ'ընդդիմանայ զէնքի ուժով»: «Ինքը Հալիլը,- այդ առթիւ աւելացնում էր դեսպանը,- երկիւղ է կրում, որ լուրջ խառնաշփոթ կ'առաջանայ»[16]:

Ինչ վերաբերում էր հայկական կողմին, ապա խոստացուած համաժողովին մասնակցելու նպատակով յունիսին Կոստանդնուպոլիս մեկնեցին երկու պատուիրակներ՝ Ահարոնեանը եւ Խատիսեանը: Գրեթէ միաժամանակ այնտեղ էին մեկնել նաեւ վրացական պատուիրակները Գեգեչկորու ղեկավարութեամբ, որոնց հետեւեցին նաեւ թաթարներն ու հիւսիսային Կովկասի ներկայացուցիչները:

Հայ պատուիրակներն այնտեղ հանդիպում ունեցան մեծ վեզիրի հետ՝ նրան ուղղուած ողջոյնի խօսքում իրենց երախտագիտութիւնն արտայայտելով անկախ Հայաստանի Հանրապետութեան ստեղծման համար, միաժամանակ, սակայն, խնդրելով Հանրապետութեանն այնպիսի սահմաններ յատկացնել, որ այն կարողանար կենսունակ դառնալ: Հանդիպումներ եղան նաեւ դեսպան Բեռնշտորֆի հետ: Վերջինիս հետ յունիսի 23-ին կայացած մի գաղտնի առանձնազրոյցում նոյն խնդրանքը նրան եւս արտայայտելով՝ պատուիրակներն աւելացրեցին, որ Հանրապետութիւնը պէտք է այնպիսի սահմաններ ունենար, որ ի վիճակի լինէր ընդունել 600.000 փախստական հայերին եւ ապահովել նրանց գոյատեւումը: «Ի միջի այլոց, նրանք գործածում էին մեր դաշնակիցների եւ նոր բարեկամների մէջ ներկայումս սովորական դարձած մեթոդը՝ Կովկասում գրեթէ իւրաքանչիւր շրջան եւ իւրաքանչիւր վայր ներկայացնելով որպէս բացառապէս հայերով բնակեցուած,- ԱԳՆ-ին ուղղուած իր՝ յունիսի 23-ի տեղեկագրում նշում էր Բեռնշտորֆը:- Անուամենայնիւ, երեւում է, որ այդ պարոնները բարի կամքով են համակուած եւ նաեւ հայկական Հանրապետութեան օրինական ներկայացուցիչներն են, եթէ, իհարկէ, նման Հանրապետութեան մասին կարող է խօսք լինել»[17]:

Դեսպանը, ելնելով պատուիրակութեան հետ իր զրոյցների արդիւնքներից կամ առաջնորդուելով իր ստացած տպաւորութիւններով (որն անկասկած աւելի հաւանական է), աւելացնում էր, որ հայերը դէմ չէին լինի միանալ Վրաստանին, իսկ վրացիները, ըստ երեւոյթին, դէմ են այդ միացմանը: Վերջիններս, այնուհանդերձ, այն տեսակէտն էին արտայայտել, նշում էր Բեռնշտորֆը, որ դա միայն հայկական սահմանների ընդարձակման դէպքում կարող էր հնարաւոր լինել, քանի որ վրացիները չէին կամենում իրենց մօտ փախստականներ ունենալ:

Սա ինքնին նշանակում է, որ Հայաստանը Վրաստանին միացնելու գաղափարը ոչ միայն առկայ էր գերմանական կողմի եւ բնականաբար նաեւ նրա դեսպանի ծրագրերում, այլեւ մինչեւ իսկ, ակնյայտօրէն առանց հայկական կողմի գիտութեան, այդ մասին վրացական ներկայացուցիչների հետ նախնական զրոյցներ էին վարուել:

Ուշագրաւ է, որ հայ պատուիրակները ընդամենը երեք օր անց՝ յունիսի 26-ին, դարձեալ հանդիպում են դեսպանին՝ բողոքելով գերմանական աջակցութեամբ զուտ հայկական շրջանները Վրաստանին միացնելու այն մտադրութիւնների դէմ, որոնք նրանց յայտնի էին դարձել Թիֆլիսի մամուլից: Յունիսի 25-ին Գեգեչկորին Զենմուլից Յունիսի 25-ին Գեգեչկորին Զենմուլից մեկելիի պահանջով Կոստանդնուպոլսից մեկնել էր Բեռլին: Երկիւղ կրելով, որ նրա մեկնումը սահմանների առնչութեամբ գաղտնի համաձայնութիւն կնքելու նպատակ էր հետապնդում՝ Խատիսեանը դեսպանից կամենում էր տեղեկանալ, թէ արդեօք ինքն էլ չպէ՞տք է գնար Բեռլին: Բեռնշտորֆը, սակայն, նրան յայտնում է, որ սահմանների հաստատումը պէտք է առաջիկայ համաժողովի գլխաւոր խնդիրը լինէր, եւ Խատիսեանին խորհուրդ է տալիս առժամանակ հանդիստ սպասել: Յունիսի 26-ին ԱԳՆ-ին ուղղուած իր տեղեկագրում դեսպանը միաժամանակ պարզ եւ անթաքոյց ներկայացնում էր իր նկատառումները Կովկասի սահմանների հաստատման մասին: «Որքան աւելի եմ ես զրուցում համաժողովի մասնակիցների հետ,- նշում էր նա,- այնքան աւելի եմ համոզուում այն համոզմանը, որ Անդրկովկասյանգում այն համոզմանը, որ Անդրկովկասը միայն երկու՝ քրիստոնէական եւ մուսուլմանական կէսերի բաժանելու դէպքում այնտեղ կարող է խաղաղութեան եւ կայունութեան հեռանկար լինել: Բաթումը եւ Բաքուն պէտք է լինեն ազատ նաւահանգիստներ: Այնուհետեւ վրացիները եւ հայերը կարող են մեզ մօտ, իսկ մահմեդականները՝ Թուրքերի մօտ յենարան գտնել: Չնայած վրացիները վերոնշեալ լուծման դէմ մի քիչ կ'ըմբոստանան, սակայն ի

15 *Die Armenische Frage und der Genozid an den Armeniern...*, էջ 530

16 Անդ, էջ 544-545

17 Անդ, էջ 545

© National Library of Armenia

վերջոյ տեղի կը տան՝ ընդունելով, որ իրենք տնտեսութեան մէջ հայերի կարիքն ունեն, եւ նաեւ կը կամենան նրանցից շատերին ներառել իրենց պետութեան կառավարման մէջ»[18]:

Դեսպանն, ըստ էութեան, անձամբ Կովկասը միայն երկու՝ թաթարական եւ վրացական պետութիւնների միջեւ բաժանելու, իսկ հայկական տարածքները վերջինիս միաւորելու կողմնակից էր: Ինքնին հասկանալի է, որ այս տարբերակը Կովկասում իր տնտեսաքաղաքական շահերը հետապնդող Գերմանիայի արտաքին քաղաքականութեան համար ունէր որոշ «առաւելութիւններ»: Նախ դրանով կը բացառուէր Թուրքիայի հետ յարաբերութիւնների վտանգումը, որն ամէն կերպ կ'ընդդիմանար հայկական քիչ թէ շատ կենսունակ պետութեան ստեղծմանը եւ բնականաբար կ'ողջունէր հայկական պետականութեան վերացումը: Միաժամանակ Գերմանիան այդ եղանակով կը կարողանար, առանց իր թուրք դաշնակցի հետ յարաբերութիւնները վտանգելու, տիրել Կովկասի մեծագոյն մասին՝ իր գերիշխանութիւնը եւ վերահսկողութիւնը տարածելով ոչ միայն բուն Վրաստանի, այլեւ միւս այն հայաբնակ շրջանների վրայ, որոնք ներառուելու էին Վրաստանի կազմում: Ուստի ինքնին հասկանալի է, թէ ինչու էր Բեռնշտորֆը հետեւողականօրէն պաշտպանում այդ տեսակէտը՝ անշուշտ, բոլոր դէպքերում այն ներկայացնելով որպէս իր անձնական կարծիքը:

Յունիսի 27-ին կովկասեան համաժողովի նախապատրաստման հարցերը քննարկելու համար դեսպանին այցելեցին նաեւ երկու թուրք պաշտօնեաներ՝ Նեսիմի բէյն ու Հալիլ բէյը: Նրանց այցելութեան բուն նպատակը, ինչպէս Բեռնշտորֆն էր նոյն օրը ԱԳՆ-ին ուղարկուած իր տեղեկագրում հաղորդում, համաժողովում քննարկուելիք հարցերի կապակցութեամբ գերմանական կողմի հետ մի միասնական դիրքորոշման մշակումն էր: Ըստ այդմ՝ նրանք կամենում էին կովկասեան պետութիւնների միջեւ սահմանները գերմանական դաշնակցի հետ նախապէս որոշարկել եւ միաժամանակ Գերմանիայի աջակցութիւնը ստանալ միւս դաշնակիցներին եւ կովկասցիներին Թուրքիայի ներկայիս սահմանների ճանաչումը հարկադրելու համար: Այդ վերջին կէտը, ինչպէս խոստովանում էր դեսպանը, նրա համար առանձնայատուկ դժուարութիւններ էր ներկայացնում, քանի որ Գերմանիան Կովկասում Թուրքիայի առաջխաղացման եւ նրա կողմից հաստատուած սահմանների առնչութեամբ արդէն կոշտ առարկութիւններ էր կատարել:

Դեսպանն իր թուրք այցելուներին ի պատասխան տեղեկացնում է, որ համաժողովի վերաբերեալ Բեռլինից դեռ ոչ մի ցուցում չի ստացել եւ որ զրոյցում շօշափուած բոլոր հարցերը կը ներկայացնի ԱԳՆ-ին: Բայց եւ այնպէս նա զրոյցի ընթացքում պաշտպանում է Բրեստ Լիտովսկի պայմանագրով ամրագրուած պահանջները եւ ընդգծում «էթնոգրաֆիական սահմաններ» ստեղծելու անհրաժեշտութիւնը: Այնուհետեւ, որպէս իր անձնական տեսակէտը, նա մատնանշում է նաեւ Կովկասը քրիստոնէական եւ մահմեդական հատուածների բաժանելու նպատակայարմարութիւնը, որի դէպքում, ըստ նրա, կարելի էր հասնել «իսկական խաղաղութեան»:

Բեռնշտորֆի թուրք զրուցակիցները նրա վերջին տեսակէտին միանգամայն համաձայն էին, սակայն այն համոզումն էին արտայայտում, որ «հայերը վրացիներին բոլոր տեսանկիւններից գերազանցում են», ուստի վրացիները դրան չէին համաձայնի, քանի որ այդպիսով կը յայտնուէին

18 Անդ, էջ 546-547

հայերի իշխանութեան տակ: «Թուրքերի մօտ շարունակ առկայ է Հայաստանի նկատմամբ պաթոլոգիական խորշանքն ու երկիւղը,- այդ առթիւ տարակոյսով նշում էր դեսպանը:- Ես նրանց ասացի, որ եթէ հայերն ինչ-որ տեղ երջանիկ ու գոհ ապրեն, եւ բոլորը գնան այնտեղ, ապա իրենք պէտք է դրա համար ուրախ լինեն, քանի որ այդ դէպքում այդ չարաբաստիկ (այսինքն՝ հայկական - Ա. Հ.) հարցը վերջապէս խաղաղ հանգուցալուծման կը գար»[19]:

Ինչեւէ, թուրքական կառավարութիւնը, չկարողանալով իրեն հետաքրքրող հարցերի շուրջ դեսպանի հետ սկզբունքային համաձայնութեան գալ եւ այդ իսկ պատճառով երկիւղ կրելով, որ համաժողովում դիւանագիտական ճախողում կ'ունենայ, այդուհետ այլեւս չէր շտապում համաժողովը հրաւիրել, մինչդեռ Կովկասում կուտակուած փախստականների անյուսալի դրութիւնը թոյլ չէր տալիս յապաղել, եւ Կոստանդնուպոլսում գտնուող հայկական պատուիրակութիւնը գործադրում էր իր բոլոր ջանքերը բանակցագործընթացն իրողութիւն դարձնելու համար: Ինչպէս տեղեկացնում էր Բեռնշտորֆը ԱԳՆ-ին ուղղուած իր՝ յուլիսի 8-ի տեղեկագրում, Ահարոնեանը նրա մօտ իր գանգատներն էր յայտնել Հայաստանում տիրող պայմանների՝ փախստականների մեծ զանգուածի հետեւանքով ի յայտ եկած սովի եւ անիշխանութեան կապակցութեամբ: Մինչդեռ վրացիները Գերմանիայից օգնութիւն են ստանում, նշել էր նա, իսկ Ադրբեջանի թաթարները վայելում են թուրքերի պաշտպանութիւնը, Հայաստանը թողնուել է իր յոյսին: Նա դեսպանին նաեւ հաղորդել էր, որ հայկական կառավարութիւնը Թիֆլիսում գերմանացիներից օգնութիւն էր խնդրել եւ ի պատասխան տեղեկացուել, որ գերմանական ազդեցութիւնը տարածւում էր միայն Վրաստանի վրայ:

Իր տեղեկագրում Բեռնշտորֆը խորհուրդ էր տալիս Թիֆլիսում գտնուող գեներալ Ֆոն Կրեսին յանձնարարել, որ հնարաւորութեան դէպքում նա այնտեղ հայերի հետ բանակցութիւններ սկսէր: Դա Կոստանդնուպոլսում անելը նպատակային չէր լինի, որովհետեւ, ըստ Բեռնշտորֆի, այնտեղ գտնուող հայ պատուիրակները «այն աստիճան երկչոտ են, որ թուրքերի դիմաց նոյնիսկ չեն համարձակուի շարժուել»[20]:

Քանի որ նախատեսուած համաժողովի իրականացումը շարունակում էր անորոշ մնալ, դեսպանն այդ պատճառաբանութեամբ թերեւս կամենում էր նաեւ իրենից վանել Կոստանդնուպոլսում բանակցագործընթաց սկսելու պատասխանատուութիւնը՝ այն տեղափոխելով Թիֆլիս:

Ինչեւէ, Կովկասում ազդեցութեան ոլորտների գրաւման հարցում երկու դաշնակիցների միջեւ առկայ հակասութիւններն ընդունակում էին սրուած մնալ, չնայած, անշուշտ, երկու կողմերից եւ ոչ մէկն էլ դիւանագիտական երկխօսութիւնը եւ դաշինքը վտանգելու մտադրութիւն չունէր: Բարեբախտաբար, Կովկասում երկու՝ վրացական եւ թաթարական պետութիւններ ստեղծելու վերաբերեալ Բեռնշտորֆի արտայայտած վերոնշեալ տեսակէտը չորդեգրուեց պաշտօնական Գերմանիայի կողմից, որն իր բանակային հրամանատարութեան միջոցով, ինչպէս արդէն նշուել է, արդէն իսկ կոշտ առարկութիւններ էր

19 Անդ, էջ 548: Յատկանշական է, որ թուրք պատուիրակները նաեւ շարունակ պնդում էին, թէ Գերմանիան կարիք չունէր Կովկասին վերաբերող հարցերի առնչութեամբ Ռուսաստանին հարց տալու, քանի որ թուրքական կողմը մտադրութիւն չունէր կովկասցիների հետ դաշինք կնքել, այսինքն՝ որեւէ պատասխանատուութիւն ստանձնել, եթէ նրանք ռուսների հետ կոնֆլիկտային իրավիճակում յայտնուէին:

20 Անդ, էջ 552

© National Library of Armenia

կատարել Թուրքական ուժերի կողմից Բրեստի պայմանագրի պահանջները խախտելու առնչութեամբ: Պէտք է նշել, որ ի տարբերութիւն Գերմանիայի քաղաքական ղեկավար շրջանների, բանակային հրամանատարութիւնն անհամեմատ աւելի պարզ եւ որոշակի դիրքորոշում էր ցուցաբերում Թուրքիային եւ Կովկասին վերաբերող խնդիրներում եւ յունիսեան օրերին թերեւս յոյս ունէր, ստանալով պաշտօնական Գերմանիայի հաւանութիւնը, Թուրքիային իրօք ետ մղել Կովկասից, այդ տարածաշրջանին, նաեւ Բաքուին ու նրա նաւթային հարստութիւններին միայնակ տիրելու համար: Ցամենայն դէպս, այդ դիրքորոշումը Գերմանիայի բարձրագոյն զինուորական շրջաններում ունէր իր կողմնակիցները:

Ուշագրաւ է, որ Վրաստանի գերմանական զօրամասերի ժամանակաւոր հրամանատար կապիտան Եգան-Կրիգերը մինչեւ նոր հրամանատարի՝ գեներալ-մայոր Ֆոն Կրեսի ժամանումը օդանաւով մի սպայի էր ուղարկել Բաքու այնտեղ գտնուող գերմանացի եւ աւստրիացի ռազմագերիներին Թիֆլիս փոխադրելու նպատակով պաշտօնական բանակցութիւններ վարելու համար՝ նրան միաժամանակ բանաւոր կերպով յանձնարարելով Բաքուի հայ բնակիչներից եւ յատկապէս՝ հայկական կայազօրից ձեռք բերել մի խնդրագիր, Թուրքերի յարձակման դէպքում գերմանական կողմից պաշտպանութիւն ստանալու եւ Բաքուում գտնուող (նաւթային) պաշարները գերմանական կողմի պաշտպանութեանը յանձնելու վերաբերեալ: Միաժամանակ բանագնացը պէտք է նախապատրաստական աշխատանք տանէր Բաքուում տիրող սովը մեղմելու նպատակով վրացական ընտանի կենդանիների եւ Բաքուի նաւթային պաշարների փոխանակութիւն կազմակերպելու համար:[21]

Զնայած օդանաւով ուղարկուած բանագնացն այլեւս չվերադարձաւ, եւ նրա ճակատագիրը այդպէս էլ մնաց անյայտ, այնուհանդերձ այս դէպքը ինքնին վկայում է, որ Կովկասում գտնուող գերմանական զինուորականութիւնը ամենեւին չահագրգռուած չէր Թուրքական ուժերի կողմից Բաքուի գրաւմամբ եւ վերոնշեալ խնդրագրի ձեռքբերմամբ ձգտում էր նախադրեալներ ստեղծել դա թոյլ չտալու համար: «Ես համոզուած եմ, որ մենք դեռ երկար պէտք է պայքարենք Թուրքերի ակտիւ եւ պասիւ դիմադրութեան դէմ, մինչեւ նրանք կը հրաժարուեն Կովկասից մի քանի միլիարդ Կոստանդնուպոլսի յանցախմբի համար կորզելու պլանից,- նշում էր գեներալ Լոսովը բարձրագոյն հրամանատարութեանն ուղղուած իր՝ յուլիսի 6-ի տեղեկագրում:- Պանիսլամական եւ պանթուրանական իմպերիալիստական քաղաքականութիւնը, որի դրօշի տակ պէտք է Կովկասի հիւթաքամումը կատարուի, հէնց իր՝ Էնվերի կողմից է ռազմական միջոցներով գործի դրուել: ... Կովկասում Գերմանիայի բազմաթիւ տնտեսական շահեր վտանգուած են, առանձնապէս նրանք, որ կապուած են մանգանի, նաւթի, բրդի եւ յատկապէս՝ բամբակի հետ, որոնց կարիքը մենք կ'ունենանք, եթէ հետագայ տնտեսական պատերազմում չենք կամենայ պարտուել: Այդօրինակ կարեւոր տնտեսական շահերը կարող են պաշտպանուել միայն զուգահեռաբար առկայ քաղաքական շահերի պաշտպանման դէպքում: Եթէ Թուրքերը քաղաքականապէս վճռորոշ դերակատարում ունենան, ապա մեր տնտեսական շահերը տանուլ կը տրուեն: Պէտք է Թուրքերին կրկին ու կրկին յայտարարուի, որ մենք բնաւ չենք մտածում Կովկասում մեր տնտեսական եւ քաղաքական շահերը զոհաբերել նրանց հեղինակութեան պահպանման համար: Մանաւանդ

21 Անդ, էջ 549

որ հեղինակութեան այդ ամբողջ խնդիրը միայն կողոպուտի պատրուակ է»[22]:

Ինչ վերաբերում էր մասնաւորապէս Հայաստանին, ապա Լոսովը այդ հարցի շուրջ եւս Գերմանիայի շահերն ու Թուրքիայի ցանկութիւնները միանշանակօրէն համատեղելի չէր համարում. «Այն, որ Թուրքիան միայն մի փոքրիկ Հայաստան կը կամենայ հանդուրժել, հասկանալի է,- նշում էր նա:- Արդեօք, սակայն, Գերմանիան կարո՞ղ է այն մեղադրանքներից յետոյ, որոնք մեր հանդէպ Թուրքահայերի ոչնչացման պատճառով կատարւում են, յետայսու եւս համաձայնել ռուսահայերի ոչնչացման հետ, պէտք է վճռեն քաղաքական շրջանները»[23]:

Լոսովի դիրքորոշումը յստակ էր նաեւ սահմանների վերջնական կարգաւորման ժամանակ Բրեստ-Լիտովսկի պայմանագրով հաստատագրուած սահմաններից դուրս նոր տարածքների զիջման առնչութեամբ Թուրքական կառավարութեան կողմից արտայայտուող պահանջների մասին: Նրա համոզմամբ, հնարաւոր նոր տարածքային զիջումները պէտք է սահմանափակուէին միմիայն Բաթումի, Արդահանի, Ղարսի շուրջ (որոնց վերջնական քաղաքական կարգավիճակը միայն հանրաքուէից յետոյ էր պարզ դառնալու), մասնաւորապէս՝ հիւսիսային եւ արեւելեան կողմերում Թուրքիային պատկանող մի գօտու յատկացմամբ, եւ որեւէ այլ զիջում պէտք է բացառուէր:[24]

Իր տեղեկագրում Լոսովը միաժամանակ առաջարկում էր Գերմանիայից դրամի, ածխի եւ ռազմական պիտոյքների ներկրումը Թուրքիա նոյն կարգի դանդաղկոտութեամբ եւ զլացումով կատարել, ինչպէս Թուրքերն էին գերմանացիների հետ վարւում Կովկասին վերաբերող հարցերում, բացի այդ, գերմանական նաւամորմի միջոցով դրաւել Սեւ ծովի ռուսական նաւամորմի մի քանի նաւեր, այդ թւում, ըստ հնարաւորին, մի մեծ հածանաւ Թուրքերին ցոյց տալու համար, որ Սեւ ծովում դրութեան փաստական տէրը Գերմանիան էր:

Գեներալ Ֆոն Լոսովն անշուշտ միակ բարձրաստիճան զինուորականը չէր, որը պաշտպանում էր Թուրքիային Բրեստի պայմանագրի ընդունումը հարկադրելու եւ Կովկասից նրան ետ մղելու տեսակէտը: Ինչպէս արդէն պարզաբանուել է, այդ հարցում միատեսակ դիրքորոշում էին որդեգրել նաեւ ֆելդմարշալ Հինդենբուրգը եւ գեներալ Էրիխ Լուդենդորֆը: Հարկ է նշել, որ բացառութիւն չէին կազմում նաեւ գեներալ Ֆոն Զեկտը[25] եւ Կովկասում գտնուող միւս բարձրաստիճան զինուորականը՝ գեներալ Ֆոն Կրեսը: Վերջինս յուլիսի 3-ին Կոստանդնուպոլսի գերմանական դեսպանին եւ յուլիսի 8-ին վերմանական զինուորական ԱԳՆ-ին ուղարկուած իր հեռագրում առաջարկում էր, որ դաշնակից պետութիւնները Կոստանդնուպոլսի համաժողովում ցուցաբերէին հետեւեալ նպատակուղղուած դիրքորոշումը. Վրաստանին, որն Անդրկովկասեան 3 պետութիւններից համեմատաբար «ամենակենսունակն» էր, պէտք է բանակցութիւնների ընթացքում առաջնայնութիւն տրուէր, եւ տարակուսելի դէպքերում սահմանների հաստատումը կատարուէր Վրաստանի օգտին: Առաջարկւում էր ճա-

22 Անդ, էջ 550

23 Անդ

24 Անդրադառնալով թուրք պատուիրակ Նեսիմիի կողմից կատարուած այն ակնարկին, որ սահմանների կարգաւորման նպատակով Կոստանդնուպոլսում նախատեսուած համաժողովը կարող էր Բեռլինում տեղի ունենալ՝ Լոսովը իր նոյն տեղեկագրում յանձնարարելի էր համարում դա ընդունել:

25 Ֆոն Զեկտը նոյնպէս Թուրքիայից պահանջել էր կանգնեցնել իր զօրքերի առաջխաղացումը: Տե՛ս Կոստանդնուպոլսի գերմանական դեսպանի՝ յուլիսի 8-ի հեռագիրը: Անդ, էջ 552:

© National Library of Armenia

նաչել Վրաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի անկախութիւնը եւ սկզբնապէս հրաժարուել նախկին Անդրկովկասեան հանրապետութեան օրինակով այդ երեք պետութիւնները միասնական պետութեան վերածելուց, եւ դրա փոխարէն ձգտել, որ ստեղծուէին համատեղ մաքսային ընկերութիւններ, ապահովուէր երկաթուղու, փոստի եւ հեռագրատան միասնական օգտագործումը: Ընդհանուր նշանակութեան կարեւոր խնդիրների լուծման համար հարկ էր համարւում ստեղծել մի խառը յանձնաժողով, որտեղ պէտք է ներգրաւուէին նաեւ դաշնակից պետութիւնների ներկայացուցիչները, եւ որի նստավայրը պէտք է լինէր Թիֆլիսը: Այնուհետեւ գեներալ Ֆոն Կրեսն առաջարկում էր Թուրքիայի հետ Վրաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի սահմանները հաստատագրել Բրեստի պայմանագրի պահանջների հիման վրայ: Թուրքական կառավարութիւնը Բաթումի եւ Արդահանի շրջաններում պէտք է անյապաղ ժողովրդական հանրաքուէ անցկացնէր, որի ղեկավարումն առաջարկւում էր յանձնարարել խառը յանձնաժողովների: Ըստ Ֆոն Կրեսի՝ Կոստանդնուպոլսի համաժողովի միջոցով անհրաժեշտ էր վերջնականապէս ամրագրել կովկասեան պետութիւններին բաժանող սահմանները, ընդ որում, ըստ հնարաւորին, առաջնայնութիւն պէտք է տրուէր Վրաստանի շահերի պաշտպանութեանը: Նա նաեւ առաջարկում էր, որ Բաքուն դառնար ազատ քաղաք-պետութիւն: Վրաստանը պէտք է համարուէր գերմանաաւստրո-հունգարական շահերի ոլորտ, Ադրբեջանը՝ թուրքական, իսկ Բաքուն՝ ռուսական, ընդ որում, Բաքւում եւ նրա մերձակայքում գտնուող բոլոր նաւթագործարանները պէտք է շահագործուէին միջազգային ընկերակցութիւնների միջոցով, իսկ արդիւնքի բաշխումը դրանում շահագրգիռ կողմերին պէտք է կատարուէր նախապէս ամրագրուած ու փոխհամաձայնեցուած չափանիշերի հիման վրայ: Ֆոն Կրեսի կարծիքով, ռուսները պէտք է պարտաւորուէին անգլիացիներին հեռացնել Բաքուից, իսկ եթէ նրանք ի վիճակի չէին դա անել, ապա կարելի էր թուրքական զօրքերին թոյլ տալ ներխուժել Բաքու:

Գեներալը անհրաժեշտ էր համարում առնուազն մինչեւ Թերեք եւ Կուբան գետերն ընկած հիւսիսկովկասեան տարածաշրջանին նոյնպէս անկախութիւն շնորհել, իսկ եթէ Ռուսաստանը չհամաձայնէր դրան, ապա պէտք էր փորձել այդ տարածաշրջանին հնարաւորինս լայն ինքնավարութիւն պարգեւել եւ այնտեղից ետ մղել բոլշեւիկեան զինուած ուժերին:[26]

Ինչպէս ակնյայտ է դառնում վերոնշեալ եւ բազմաթիւ այլ գերմանական դիւանագիտական տեղեկագրերից, գերմանացի գրեթէ բոլոր բարձրաստիճան զինուորականները համակարծիք էին այն հարցում, որ Թուրքիայի հետ կովկասեան պետութիւնների սահմանները պէտք է վճռուէին՝ համաձայն Բրեստ-Լիտովսկի պայմանագրի պահանջների, իսկ թուրքական զօրքերը պէտք է ետ քաշուէին այդ սահմաններից այն կողմ: Ինչպէս արդէն պարզաբանուել է, դեռ յունիսին գեներալ Լուդենդորֆն ու ֆելդմարշալ Հինդենբուրգը հանդէս եկան Էնվերին ուղղուած համապատասխան խիստ պահանջներով, իսկ գեներալ Ֆոն Կրեսը մինչեւ իսկ առաջարկում էր Բաքուն դարձնել ռուսական ազդեցութեան ոլորտ եւ, ըստ այդմ, փաստօրէն համաձայնեցնել խորհրդային Ռուսաստանի հետ: Չնայած այդ հարցում բարձրաստիճան զինուորականների միջեւ առկայ համաձայնութեանը, պաշտօնական Գերմանիան սակայն, հակուած չէր ցուցաբերել նրանց հետեւողականութիւնն ու վճռականությունը, որից եւ վարպետօրէն

26 Անդ, էջ 553-554

կարողացաւ օգտուել Թուրքիան: Աւելին՝ որքան էլ կարող է տարօրինակ թուալ, գերմանական կառավարութիւնն այդ օրերին Կովկասի իրաւունքների վերջնական կանոնաւորման որոշակի ծրագիր դեռեւս չունէր, եւ ինչպէս վկայում էր հէնց Ֆոն Կրեսն իր տեղեկագրերից մէկում, Կովկասում գտնուող գերմանական բարձրաստիճան զինուորական, ինչպէս եւ դիւանագիտական շրջանները, յաճախ չստանալով համապատասխան ցուցումներ ու հրահանգներ եւ «տեղեկացուած չլինելով» «կայսրութեան կողմից վարուող քաղաքականութեան մասին», հարկադրուած էին գործել ինքնուրոյն՝ ըստ սեփական տրամաբանութեան թելադրանքի:[27] Թուրքիան կարողացաւ վարպետօրէն օգտուել այդ հանգամանքից, իրեն ուղղուած պահանջները չկատարելու, զանազան պատրուակներով Կովկասում իր դիրքերն ամրապնդելու եւ միաժամանակ դէպի Բաքու իր առաջխաղացումը շարունակելու համար: Մոզալ բէյի հրամանատարութեան ներքոյ գտնուող 5-րդ թուրքական կովկասեան դիւիզիան դեռ յունիսի 13-ին Սադախլուից մեկնել էր Ելիզաւետպոլ, որտեղ Էնվերի եղբայր Նուրի փաշայի ղեկավարման ներքոյ կուտակւում էին նաեւ թուրքական այլ զօրամիաւորումներ՝ վերակազմուելով մի, այսպէս կոչուած, «իսլամական բանակի», որի հիմնական խնդիրներից մէկը պէտք է լինէր Բաքուի գրաւումը:[28] Թուրքական այդ նախապատրաստութիւններին գերմանական կողմն, ըստ էութեան, իրազեկ չէր եղել: Վերջինս այնտեղ թուրքական մեծաքանակ ուժերի կուտակման եւ Բաքուի ուղղութեամբ նրանց առաջխաղացման մասին տեղեկանում է միայն այն ժամանակ, երբ յուլիսի սկզբին Քուրդամիր եւ Կարամարեան բնակավայրերի մօտ ուժգին մարտեր են բռնկւում (Նուրի փաշայի հրամանատարութեան ներքոյ գտնուող) թուրքական զօրքերի եւ հայկական զինուած ուժերի միջեւ: Նուրի փաշան գերմանական կողմից իրեն ուղղուած պահանջների անտեսման այդ փաստն այնուհետեւ փորձում էր պատճառաբանել այն պատրուակով, թէ ինքը Բաքուի բոլշեւիկների ստեղծած սպառնալից իրավիճակի եւ յարձակումների հետեւանքով է հարկադրուած եղել իր զինուած ուժերն այնտեղ աւելացնել՝ հասցնելով մի դիւիզիայի: Նման պատրուակը, սակայն, չէր կարող որեւէ կերպ հաւատարժան համարուել: «Ես բեւէ կերպ հաւատարժան համոզուած եմ,- այդ առնչութեամբ նշում էր դեսպան Բեռնշտորֆն իր՝ յուլիսի 8-ին ԱԳՆ-ին ուղարկուած հեռագրում,- որ Նուրին չնայած ժամանակին ստացել էր Բաքուի անտեսման մասին հրամանը, սակայն բացակերպով տրուած հրամանը, որ նա կա՛մ ինքնուրոյն չեմ համարում, որ նա կա՛մ ինքնիշխան կերպով շարունակում է նուաճողական պատերազմ վարել, կա՛մ գաղտնի յանձնարարութիւններ է ստացել իր եղբորից, որոնք նրան դրդում են դա անել: Նման անակնկալները եւ Բաքուի ուղղութեամբ թուրքական հետագայ առաջխաղացումը անպայմանօրէն արգելելու հաղացումը դադարեցնելու վերաբերեալ գեներալ Ֆոն Զեկտի կողմից ճշգրիտ կերպով տրուած հրամանը, սակայն բացակերպով տրուած հրամանը, որ նա կա՛մ ինքնուրոյն չեմ համարում, որ նա կա՛մ ինքնիշխան կերպով շարունակում է նուաճողական պատերազմ վարել, կա՛մ գաղտնի յանձնարարութիւններ է ստացել իր եղբորից, որոնք նրան դրդում են դա անել: Նման անակնկալները եւ Բաքուի ուղղութեամբ թուրքական հետագայ առաջխաղացումը անպայմանօրէն արգելելու հաղացումը անպայմանօրէն արգելելու համար ես կը կամենայի դարձեալ պաշտպանել գեներալ Ֆոն Կրեսի այն առաջարկը, որ մենք թուրքական կառավարութիւնից մի գրաւոր համաձայնութիւն պահանջենք այն մասին, որ նրանք առանց մեր համաձայնութեան ոչ մի դէպքում չձեռնարկեն որեւէ յարձակում եւ նաեւ հետագայ առաջխաղացում Բաքուի վրայ: Քանի որ, ըստ վերջին լուրերի, ռուսական մի գնդապետի ղեկավարութեան ներքոյ Աստրապետի ղեկավարութեան ներքոյ Աստրախանից Բաքու են հասել 1000 մարտիկներ, հաւանաբար պէտք է թուրքական կառավարությանը յանձնարարել տեղեկութիւն հրապարակել այն մասին, որ Քուրդամիրի

27 Անդ, էջ 549

28 Այդ մասին տե՛ս նաեւ Մ. Ս. Կարապետեան, *Հայաստանը 1912-1920 թուականներին*, Եր., 2003, էջ 243:

© National Library of Armenia

վրայ թուրքական առաջխաղացումը տեղի է ունեցել ոչ թէ Բաքուի դէմ յարձակողական դիտաւորութեամբ, այլ պաշտպանողական նպատակներով»[29]:

Չնայած երկու դաշնակիցների միջեւ առաջացած վերոնշեալ հակասութիւններին եւ լարուածութեանը, Հայաստանի Հանրապետութեան եւ բազմահազար հայ փախստականների ծանր ու անելանելի դրութիւնը շարունակում էր մնալ նոյնը: Հակառակ Բաթումի «պայմանագրին» եւ այն բանին, որ Թուրքիան ճանաչել էր Հայաստանի Հանրապետութիւնը, թուրքական կողմը Թիֆլիսում գտնուող Հայոց ազգային խորհրդին, ինչպէս եւ Վրաստանի տարածքում գտնուող հայ փախստականներին թոյլ չէր տալիս վերադառնալ հայրենիք: Հայաստանի Հանրապետութիւնն ամբողջովին մեկուսացուած էր, իսկ այնտեղ կուտակուած փախստականները դատապարտուած էին սովահարութեան: Այդ իրավիճակում հանրապետութեան ղեկավարութիւնն այլ ելք չէր տեսնում, քան շարունակել ջանքեր գործադրել Գերմանիայի աջակցութիւնը ձեռք բերելու եւ նրա օգնութեամբ անելանելի դրութիւնից դուրս գալու, սովահար փախստականներին փրկելու համար:

Գերմանիայից օգնութիւն խնդրելու համար յունիսի երկրորդ կէսին իր կեանքը բազում վտանգների ենթարկելով, ձիով հատելով թաթարական բանդաների կողմից վերահսկուող լեռնաշղթաները՝ Երեւանից Թիֆլիս մեկնեց Մեսրոպ եպիսկոպոսը, որը նախկինում եղել էր Հայոց Եկեղեցու Թիֆլիսի թեմակալը եւ, իր կրթութիւնը ստացած լինելով Դորպատում, վարժ տիրապետում էր գերմաներէնին: Նա այնտեղ հանդիպում ունեցաւ գեներալ Ֆոն Կրեսի հետ՝ նրան նկարագրելով հայութեան աղետալի դրութիւնը: Ըստ նրա տեղեկութիւնների՝ եթէ հայերին չթոյլատրուէր վերադառնալ Սարդարաբադ-Իգդիրի եւ Դաւալուի շրջանները եւ այնտեղ գտնուող բերքը հաւաքել, ապա առնուազն կէս միլիոնի հասնող փախստականներին սովամահութիւն էր սպասւում: «Հաւատարժան եւ վաստակաշատ եպիսկոպոսի նկարագրութիւնները ցնցող են,- գրում էր Ֆոն Կրեսը յուլիսի 10-ին ԱԳՆ-ին ուղարկուած իր հեռագրում:- Ողջ հայ ազգը ամբողջական մեկուսացման միջոցով սովամահ անելու՝ թուրքերի դիտաւորութիւնը պարզ եւ ակնյայտ է: Էսադը հայ փախստականներին եւ Հայոց ազգային խորհրդին վերադառնալու թոյլտուութիւն տալու իմ խնդրանքը չնչին պատրուակներով մերժել է: Մարդկայնութիւնը եւ քաղաքականութիւնը շտապ կերպով պահանջում են կենտրոնական տէրութիւնների կողմից ամենաուժեղ ճնշումը գործադրել թուրքերի վրայ»[30]:

Յաջորդ օրը՝ յուլիսի 11-ին, Ֆոն Կրեսը մի նոր ընդարձակ տեղեկագիր ուղարկեց այս անգամ՝ ուղղակիօրէն կանցլեր իշխան Ֆոն Հերտլինգին, որտեղ խիստ ազդու եւ սրտառուչ կերպով ներկայացնելով հանրապետութեան եւ փախստական հայութեան համար ստեղծուած օրհասական դրութիւնը՝ նա վերստին ընդգծում էր Թուրքիայի վրայ վճռական ճնշման գործադրման անհրաժեշտութիւնը: Տեղեկագրում, համաձայն հայ պատուիրակի տեղեկութիւնների, նաեւ հաղորդւում էր, որ հազարաւոր փախստականներ շաբաթներ ի վեր միայն խոտ էին ուտում, սովահար մարդկանց մէջ բռնկուել էին ու անհաչիւ զոհեր էին խռում համաճարակները, եւ եթէ նրանց չթոյլատրուէր հաւաքել վերոնշեալ շրջաններում հասունացող գիւղատնտեսական բերքը, ապա ընդհանուր սովամահութիւնն անխուսափելի էր: Գեներալը միաժամանակ ընդգծում էր Հայոց ազգային խորհրդին եւ Վրաստանում անմխիթար դրութեան մէջ գտնուող հայ փախստականներին հայրենիք վերադառնալու հնարաւորութիւն ընձեռելու անհրաժեշտութիւնը եւ, յենուելով եպիսկոպոսի տեղեկութիւնների վրայ, հաղորդում էր Թուրքերի կողմից 17-ից 60 տարեկան 14.000 հայերի բռնի կերպով հաւաքելու եւ առանց վարձատրութեան, միայն մի կտոր (200 գրամ) չոր հացի դիմաց հարկադիր կերպով աշխատեցնելու փաստը: «Եպիսկոպոսը հայ ազգի անունից եւ, որպէս քրիստոնեայ եկեղեցու սպասաւոր, դիմում է Նորին մեծութիւն կայսրին եւ գերմանական կառավարութեանը,- նշում էր գեներալն իր տեղեկագրում:- Նա ընդգծում է, որ միայն Գերմանիան է ի վիճակի Թուրքիային ստիպել, որ նա հրաժարուի իր կողմից յանցաւոր կերպով սկսուած՝ հայ ազգի չնչին մնացորդներին սիստեմատիկ կերպով սովամահ անելու քաղաքականութիւնից: Գերմանիան պարտաւոր է գիտակցել, որ պատմութեան առջեւ պատասխանատուութիւն է կրելու, եթէ իր իշխանութիւնը չօգտագործի մի քրիստոնեայ ազգի մահմեդականների կողմից բնաջնջուելուց պաշտպանելու համար: Ձերդ Գերազանցութեանը ես, որպէս իմ անձնական նկատառումը, կը կամենայի հաղորդել, որ այն բոլոր տեղեկութիւններից եւ տեղեկագրերից յետոյ, որոնք ես այստեղ ստացել եմ, չի կարող կասկածի ենթակայ լինել, որ թուրքերը սիստեմատիկ կերպով ձեռնամուխ են եղել մի քանի հարիւր հազար հայերին, որոնց նրանք մինչեւ այժմ դեռ կենդանի են թողել, սիստեմատիկ սովամահութեան միջոցով բնաջնջելուն:

Իմ իրաւասութեան մէջ չի մտնում Ձերդ Գերազանցութեան ուշադրութիւնը հրաւիրել այն պարտաւորութիւնների վրայ, որոնք Գերմանիան, որպէս քրիստոնեայ ազգ, պէտք է իրագործի քրիստոնեայ հայերի հանդէպ, ինչպէս եւ այն տպաւորութեան վրայ, որ կը ստանան մեր հասարակական կարծիքը եւ ամբողջ քրիստոնեայ աշխարհը, եթէ մենք հայերին կործանումից չփրկենք: Ես, սակայն, կարող եմ Ձերդ Գերազանցութեան ուշադրութիւնը հրաւիրել այն բանի վրայ, որ եթէ մեզ չյաջողուի Ենյերին թուրքերից պաշտպանել, ապա Կովկասում եւ շրջակայ տարածքներում մեր հեղինակութիւնը մեծ վնասներ կը կրի, եւ էապէս կը դժուարանայ այն տնտեսական ու քաղաքական ծրագրի իրագործումը, որին մենք այստեղ հետամուտ կը լինենք: Մեզ վճռականաբար կը մեղադրեն այն բանում, որ բարի կամք չենք ցուցաբերել, կամ կ'ընդունեն, որ մենք թուրքերի հանդէպ մեր կամքն իրագործելու ուժ եւ իշխանութիւն չունենք: Մենք բազմաթիւ եւ իրենց մեծ հարստութեան հետեւանքով շատ ազդեցիկ՝ հայկական ծագում ունեցող վրացիներին կը դարձնենք մեր անհաշտ թշնամիները եւ մեր դէմ մի առանձնապէս ազդու ները եւ մեր դէմ մի առանձնապէս ազդու պրոպագանդայի նիւթ կը տանք մեր հակառակորդներին:

Այդ պատճառով ես Ձերդ Գերազանցութեանը նոյնքան թախանձագին, որքան հնազանդօրէն խնդրում եմ բոլոր հնարաւոր միջոցներով եւ հնարաւորինս արագ ազդու ճնշում գործադրել թուրքական կառավարութեան վրայ, որպէսզի նա անմիջապէս իր զօրքերը Հայաստանից ետ քաշէ իր զօրքերը Հայաստանից ետ քաշէ, փախստական հայերին թոյլատրի վերադառնալ իրենց հայրենիքը եւ հոգ տարի, որ հայերը անարգել եւ առանց իրենց կեանքն ու ունեցուածքը վտանգելու կարողանան բերքը հաւաքել, նաեւ՝ որ հարկադիր աշխատանքի ուղարկուած հայերն անմիջապէս ազատուեն ու վերադառնան իրենց հայրենիքը»[31]:

29 *Die Armenische Frage und der Genozid an den Armeniern...*, էջ 552-553

30 *Deutschland und Armenien 1914-1918...*, էջ 402-403

31 Անդ, էջ 403-404

© National Library of Armenia

Գեներալ բարոն ֆոն Կրեսը յուլիսի 15-ին Մեսրոպ եպիսկոպոսի եւ մի զինուորական բժշկի ուղեկցութեամբ այցելում է նաեւ Բակուրիանիի անտառները, որտեղ թուրքական զօրքերի մայիսեան առաջխաղացման հետեւանքով երկու օրուայ հեռաւորութեան վրայ գտնուող Ախալքալաքից փախել եւ խիստ անմխիթար պայմաններում ճամբարել էին շուրջ 40.000 հայեր: Յուլիսի 16-ին ԱԳՆ-ին ուղարկուած հեռագրում նկարագրելով այդ հայերի զրկանքները, որոնց մեծագոյն մասը ուտեստի չնչին իսկ պաշար չունէր, նրանց մէջ տիրող սովահարութիւնը, համատարած սովամահութեան սպառնալիքը, բռնկուած համաճարակների աճը, որոնց պատճառով Վրաստանի կառավարութիւնը հրաժարւում էր նրանց վերաբաշխել Վրաստանի շրջաններում՝ ֆոն Կրեսը յոյժ անհրաժեշտ էր համարում պայմաններ ստեղծել, որ նրանք կարողանային վերադառնալ եւ հաւաքել մի քանի օրից հասունացող բերքը, որն այլապէս, քանի որ թուրքերն ի վիճակի չէին այն հաւաքել, մնալու էր դաշտերում: Նա միաժամանակ ընդգծում էր դաշնակիցների կողմից այդ մարդկանց հացահատիկով ապահովելու անհրաժեշտութիւնը՝ չմոռանալով վերստին յիշեցնել, որ, բացի այդ, Թիֆլիսում նոյնօրինակ յուսահատ դրութեան մէջ գտնւում էին 30.000 հայ փախստականներ, իսկ եւս 500.000-ը՝ Երեւանում ու նրա շրջակայքում, որոնք բոլորն էլ արագ եւ ազդու միջամտութեան ու օգնութեան բացակայութեան դէպքում դատապարտուելու էին կործանման:[32]

Գեներալ ֆոն Կրեսի ազդու կոչերն ու տեղեկութիւնները, սակայն, նոյնպէս որեւէ նկատելի տեղաշարժ չարձանագրեցին գերմանական կառավարութեան քաղաքականութեան մէջ: Վերջինս շարունակում էր հայերին վերաբերող խնդիրների շուրջ իր թուրք դաշնակցի հետ խօսել յորդորների լեզուով, որոնք թուրքերի կողմից զանազան պատրուակներով շարունակ մերժւում էին: Ֆոն Կրեսի վերոնշեալ հեռագրի հիման վրայ ԱԳՆ-ն դիմում է թուրքական կողմին, Ախալքալաքից փախած հայերին վերադարձի հնարաւորութիւն ընձեռելու համար: Բաթումում գտնուող Էսադ փաշան, սակայն, ինչպէս տեղեկացւում էր պետքարտուղարի կողմից բանակի հրամանատարութեանն ուղղուած յուլիսի 13-ի հեռագրում, մի գրութեամբ նրան պատասխանել էր, որ փախստականների վերադարձը դէպի Ախալքալաք ներկայումս անհնար էր, քանի որ, իբրեւ թէ, այդ շրջանի բնակչութիւնը դեռ խիստ կերպով վրդովուած էր հայերի կողմից այդ շրջանում կատարուած «ոճրագործութիւնների հետեւանքով»[33]:

Թուրք պաշտօնեայի պատասխանի խաբէութիւնն իհարկէ, պարզաբանման կարիք չունի: Ըստ նրա տեղեկութեան՝ կարելի էր ենթադրել, որ Ախալքալաքի բնակչութեան մեծամասնութիւնը մահմեդականներ էին, որոնց հանդէպ փախստական հայ փոքրամասնութիւնը յանցաւոր արարքներ էր կատարել: Այդ պատասխանը, սակայն, թերեւս լիովին բաւարարում էր պաշտօնական Գերմանիային, քանի որ փախստականների հանդէպ յարուցուած արգելքները շարունակում էին պահպանուել:

Ինչեւէ, ստեղծուած միանգամայն աննպաստ իրավիճակում թուրք-թաթարական շրջափակման մէջ գտնուող Հայաստանի Հանրապետութիւնը Կոստանդնուպոլսում եւ Բեռլինում գտնուող իր պատուիրակութիւնների միջոցով շարունակում էր գործադրել բոլոր ջանքերը Գերմանիայի աջակցութիւնը ստանալու համար: Կոստանդնուպոլսի պատուիրակութիւնը յուլիսի սկզբին մի հեռագիր ուղարկեց Բեռլինում գտնուող պատուիրակներին, որն այն ներկայացրեց արտգործնախարարութեանը, իսկ պետքարտուղար Բուշեն իր հերթին այն, առանց որեւէ կից յանձնարարականի, ուղարկեց բանակի գլխաւոր հրամանատարութեանը՝ բարոն ֆոն Լերսներին: Այնտեղ նշւում էր, որ Հայոց ազգային խորհուրդն ամէն օր տագնապալի տեղեկութիւններ էր ստանում թուրքական զօրքերի կողմից գրաւուած Լոռու շրջանից: Թուրք-թաթարական բանդաների կողմից կատարուող կողոպուտն ու սպանութիւնները շարունակաւելի մեծ չափեր էին ընդունում, եւ Բաթումում ձեռք բերուած համաձայնութիւններից յետոյ միայն Ղարաքիլիսայում 2000 տղամարդիկ, կանայք եւ երեխաներ արդէն սպանդի զոհ էին դարձել: Նաեւ տեղեկացւում էր, որ Հայոց ազգային խորհուրդը պատուիրակութեանը յանձնարարել էր այդ ամէնի դէմ բողոքել եւ պահանջել, որ թուրքական զօրքերն ազատեն գրաւուած վիճակում պահուող հայկական տարածքը:[34]

Բեռլինի պատուիրակութիւնը ի հաստատումն իր կողմից արտգործնախարարութեանը ներկայացուած տեղեկագրերի հաւաստիութեան, յուլիսի 15-ին ԱԳՆ-ին ներկայացրեց նաեւ քաղուածքներ այն նամակներից ու տեղեկութիւններից, որոնք ստացուել էին նրա՝ Բեռլինում գտնուելու վերջին ժամանակամիջոցում: Դրանք սկսւում էին Հայոց ազգային խորհրդի նախագահ Ահարոնեանի՝ յունիսի 11-ի նամակից բերուած քաղուածքներով, որոնցում տեղեկացւում էր, որ թուրքական առաջխաղացման հետեւանքով հայ բնակչութիւնը հարիւր հազարներով փախուստի էր դիմել: Ախալքալաքի շրջանն արդէն ամբողջութեամբ դատարկուած էր, քաղաքը՝ այրուած եւ փլատակների մէջ: Շրջանի 80.000-ի հասնող բնակչութիւնը փախել էր եւ ապաստանել Բակուրիանիի կիրճերում: Նշւում էր նաեւ, որ ամբողջ Սուրմալուից, Ալեքսանդրապոլի եւ Կարսի բոլոր գրաւուած շրջաններից, Էջմիածնից եւ բոլոր միւս տարածքներից, որտեղ ներխուժել են թուրքերը, բնակչութիւնը զանգուածային փախուստի էր դիմել եւ տասնեակ հազարներով ոչնչացել: Այն փաստը, որ թուրքերը Ալեքսանդրապոլ քաղաքից եւ շրջակայքից ողջ հայ եպիսկոպոսարդութեանը հաւաքել եւ Թուրքիայի խորքն էին տարել, այնպիսի սարսափ է յարուցել, գրում էր Ազգային խորհրդի նախագահը, որ ոչ մի փախստական այլեւս չէր կամենում վերադառնալ թուրքերի կողմից նուաճուած շրջանները: «Այնպէս է երեւում, որ Գերմանիան Վրաստանի նկատմամբ լուրջ եւ վճռական պարտաւորութիւններ է ստանձնել, որոնք ազնուօրէն եւ արիաբար իրականացնում է, մինչդեռ մեր խնդիրը դեռ կախուած է օդում,- նշւում էր Ահարոնեանի նամակում:- ...Հայ ժողովուրդը փախուստի «ճիրաններում» կործանւում է, ինչպէս կործանուել է Թուրքահայաստանում: Գերմանիան, որը հարկադրուած էր Թուրքահայաստանում հայերի հանդէպ իրականացուած այդ սոսկալի ոճրագործութիւնը հանդուրժել, քանի որ նրա ձեռքը չէր հասնում, այժմ մի՞թէ կամենում է հանդուրժել, որ նաեւ այստեղ՝ Կովկասում, հայ ժողովուրդը սովի եւ փախուստի միջոցով բնաջնջուի, քանի որ այժմ Գերմանիայի ձեռքը հասնում է, եւ նա կարող է հրաշք գործել, եթէ ցանկանայ: Այստեղի գերմանական ներկայացուցիչը՝ իշխան ֆոն Շուլենբուրգը, մեր հանդէպ բարեցակամօրէն է իրեն պահում, սակայն նա Բեռլինից ցուցումներ չի ստացել ի նպաստ մեզ գործելու համար այնպէս, ինչպէս գործում է ի նպաստ Վրաստանի: ... Թուրքերը փաստօրէն այսօր տիրում են ողջ

32 *Die Armenische Frage und der Genozid an den Armeniern...*, էջ 556

33 Անդ, էջ 555

34 Անդ

© National Library of Armenia

Ադրբեջանին: Նրանք տիրում են նոյնիսկ հայկական շրջաններին, որոնք խաղաղութեան վերջին պայմանագրից յետոյ չպէտք է թուրքական տիրապետութեան տակ լինէին: Թուրքական զօրքերը նուաճուած են պահում Լոռին, Ղազախը, Բորչալուն: Մենք Երեւանից տեղեկութիւններ չունենք: Մենք կտրուած ենք: Երկաթուղին եւ հեռագրատունը չեն գործում: Վիճակն անտանելի է: Մենք նոյնիսկ խաղաղութեան հաստատման լուրը չկարողացանք յայտնել գեներալ Նազարբեկովին: Մենք կտրուած ենք նաեւ Բաքուից: Մենք փորձում ենք մեր հայկական հանրապետութեան կառավարութիւնը կազմել, բայց Երեւան մեկնելու ոչ մի հնարաւորութիւն չկայ: Մեր ժողովուրդը անտէր է, մեր փախուստը՝ անվերջ, մահացութիւնը՝ ահռելի մեծ չափերի: Մենք պէտք է որոշակիօրէն եւ իսկոյնեւեթ իմանանք. Գերմանիան կամենո՞ւմ է մեզ պաշտպանել, թէ՞ ոչ»[35]:

Ահարոնեանի նամակի հետ միասին գերմանական արտգործնախարարութեանը ներկայացուեցին նաեւ քաղուածքներ Թիֆլիսում տպագրուող «Հորիզոն» թերթի հրապարակումներից, որտեղ պատմւում էր Կարսի ամրոցի կայազօրի սպաներին վիճակուած դժխեմ ճակատագրի եւ հայ փախստականների ծանր դրութեան մասին:[36]

Ուշագրաւ է, որ, ինչպէս նաեւ վերեւում է յիշատակուել, ի տարբերութիւն գերմանական կանցլերի եւ արտգործնախարարութեան կողմից հայկական ողբերգութիւնների նկատմամբ ցուցաբերուող անտարբեր եւ անգործունեայ կեցուածքին, գերմանական բանակի հրամանատարութիւնը, իր վերոնշեալ բարձրաստիճան զինուորականներից ստանալով համապատասխան դրդումներ, հայկական ծանր դրութեան առնչութեամբ, որպէս կանոն, աւելի ակտիւ եւ արմատական դիրքորոշման ցուցաբերման միտումներ էր հանդէս բերում: Յուլիսի առաջին կէսին բանակի գլխաւոր հրամանատարութեան շտաբում տեղի ունեցաւ կովկասեան պետութիւններին եւ Պարսկաստանին վերաբերող մի քննարկում եւ ընդունուեցին մի շարք որոշումներ, որոնց կիրառումը կարող էր էապէս փոփոխել Հայաստանի Հանրապետութեան եւ Կովկասում կուտակուած հայութեան անելանելի դրութիւնը: Գեներալ Լուդենդորֆը նոյնպէս իր համաձայնութիւնը տուեց այդ որոշումների գործադրմանը՝ գեներալ ֆոն Լոսովին յանձնարարելով արտգործնախարարութեան պետքարտուղարին այդ մասին զեկուցել եւ խնդրել նրան հոգ տանել, որ այդ որոշումների առնչութեամբ ռազմական եւ քաղաքական իշխանութիւնների փոխհամաձայնութիւնն ապահովուէր: Այդ որոշումներում, որոնք ֆոն Լոսովը յուլիսի 15-ին ուղարկեց արտգործնախարարութեանը, մասնաւորապէս նշւում էր, որ ներկայումս, երբ արդէն աւարտուել էին Վրաստանի հետ բանակցութիւնները, պէտք է, ըստ հերթականութեան, բանակցութիւններ սկսուէին Հայաստանի, Ադրբեջանի եւ Հիւսիսային Կովկասի հետ: Ընդ որում, Հայաստանի եւ Ադրբեջանի հետ տեղի ունենալիք բանակցութիւններում նոյնպէս հնարաւոր էր համարւում այդ երկրների եւ Թուրքիայի միջեւ Բաթումում կնքուած պայմանագրերի վերանայումը: Քանի որ այդ երկրների պետական-կառավարման մարմինները դեռեւս լիարժէք ձեւաւորուած չէին, ապա, ըստ բանակի գլխաւոր հրամանատարութեան, այդ երկրների հետ բանակցութիւնները պէտք է ժամանակաւոր բնոյթ կրէին: Բոլոր դէպքերում հնարաւոր էր համարւում, որ Հայաստանի եւ Ադրբեջանի հետ կնքուած թուրքական պայմանագիրը փոխարինուէր մի ընդհանուր ժամանակաւոր պայմանագրով, որը

35 *Deutschland und Armenien 1914-1918...*, էջ 405-406

36 Անդ, էջ 406-408

կ'ամրագրէր այդ նոր «պետական կազմաւորումների» եւ դաշնակից պետութիւնների քաղաքական ու տնտեսական փոխյարաբերութիւնները:[37]

Հայաստանի առնչութեամբ մասնաւորապէս արտայայտւում էր նաեւ գերմանական բանակի հրամանատարութեան ձգտումը՝ հասնելու այն բանին, որ աւստրո-հունգարական բանակի գլխաւոր հրամանատարութիւնը տրամադրէր մի քանի գումարտակներ եւ մարտկոցներ, Հայաստանում նոյն առաքելութեամբ հանդէս գալու համար, ինչպէս գերմանացիները՝ Վրաստանում: Ընդ որում, ընդգծւում էր, որ այդ զինուած ուժերի առաջնագոյն խնդիրներից մէկը պէտք է լինէր ապահովել հայերի ֆիզիկական գոյութիւնը սպառնացող թուրք-թաթարական կոտորածներից: Բացի այդ, ցանկալի էր համարւում, որ դաշնակիցների օգնութեամբ հայկական զինուած ուժերը կազմակերպուէին ու դարձեալ գործածունակ դառնային ճիշտ այնպէս, ինչպէս գերմանացիները կամենում էին դա անել Վրաստանում:[38]

Այս փաստաթուղթը, որպէս հայկական խնդրի առնչութեամբ գերմանական բանակի գլխաւոր հրամանատարութեան կողմից ցուցաբերուած յստակ եւ միասնական դիրքորոշման աննախադէպ վաւերագիր, կարող էր միանգամայն փոխել Հայաստանի Հանրապետութեան եւ այնտեղ կուտակուած փախստական հայութեան ծանր դրութիւնը, եթէ միայն համապատասխան ըմբռնում գտնէր նաեւ Գերմանիայի քաղաքական շրջաններում: Քանի
որ վերոնշեալ որոշումներն ունէին ոչ
միայն զուտ ռազմական, այլեւ քաղաքա-
կան նշանակութիւն, գեներալ Լուդեն-
դորֆն այդ որոշումների փաթեթին
կցուած մի գրութեամբ միաժամանակ
ընդգծում էր, որ բանակի գլխաւոր հրա-
մանատարութիւնը ցանկանում էր «վերա-
դառնալ» կովկասեան հարցերին վերաբե-
րող զուտ ռազմական բնոյթի յանձնառու-
թիւններին, իսկ քաղաքական ղեկավար-
ման գործը կամենում էր թողնել բացառա-
պէս արտգործնախարարութեանը: Ուշա-
գրաւ է, որ նա նաեւ պետքարտուղարին
խնդրում էր իրեն օգնել այդ հարցում,
ինչն անշուշտ կարող էր միայն հետեւեալ
երկու հանգամանքներով բացատրուել.
կա՛մ բանակի գլխաւոր հրամանատարու-
թիւնը իրաւասու էր իրեն նաեւ քաղաքա-
կան խնդիրներ առաջադրել ու լուծել, սա-
կայն այս դէպքում խուսափում էր դրա-
նից, եւ կա՛մ գեներալը դրանով պետքար-
տուղարին անուղղակիօրէն կամենում էր
յիշեցնել քաղաքական ղեկավարութեան
կողմից հարցի նկատմամբ համապատաս-
խան ըմբռնման եւ ակտիւ գործելակերպի
ցուցաբերման անհրաժեշտութիւնը: Մեր
կարծիքով, առաւել հաւաստի է երկրորդ
շարժառիթը:

Գերմանիայի քաղաքական ղեկավա-
րութիւնը, սակայն, ցաւօք, պահանջուած
մօտեցումը չցուցաբերեց, եւ թուրքական
կողմը հնարաւորութիւն ունէր ու կարո-
ղացաւ հմտօրէն օգտուել դրանից:

37 Անդ, էջ 409: Դեռ պետական որեւէ հիմնային հետ կառոյց չունեցող հիւսիսկովկասցիների պայմանագրի կնքումը համարում էր դժուարիրագործելի մի խնդիր:

38 Անդ, էջ 409-410

© National Library of Armenia